ALIGN

ACHIEVING AND CHECKING THE ALIGNMENT BETWEEN ACADEMIC PROGRAMMES AND QUALIFICATION FRAMEWORKS

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄ

543901-TEMPUS-1-2013-1-AM-TEMPUS-JPGR

ALIGN ԱԶԳԱՅԻՆ ԹԻՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Սուսաննա Կարախանյան, INQAAHE նախագահ, ՀԳՊԱ ռեկտորի խորհրդական, ALIGN ծրագրի կառավարման խմբի անդամ

Լուիզա Միլիտոսյան, Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, Align ծրագրի համակարգող, ԵՊԼՀ

Ռուբեն Թոփչյան, ՈԱԱԿ-ի տնօրեն

Քրիստինե Սողիկյան, Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի վարիչ, ԵՊԼՀ

Արամ Բայկով, Կրթական ծրագրերի բաժնի վարիչ, ԵՊԲՀ

Մկրտիչ Այվազյան, Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ՀԳՊԱ

Ռոբերտ Խաչատրյան, Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ, ԵՊԼՀ

Վարդուհի Գյուլազյան, Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ավագ մասնագետ, ՈԱԱԿ

Անի Մազմանյան, Որակի ապահովման կենտրոնի համակարգող, ԵՊԼՀ

www.align.brusov.am

Co-funded by the Tempus Programme of the European Union

Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական Հանձնաժողովի կողմից:
Սույն տպագրությունը արտացոլում է միայն հեղինակների տեսակետերը, և Եվրոպական Հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում պարունակող տեղեկատվության համար:

ԵՐԵՎԱՆ 2017

Հարգելի գործընկերներ,

ALIGN ծրագիրը Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (INQAAHE) նախաձեռնություններից է, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի և Եվրոպական Միության բարձրագույն կրթության ոլորտի առաջատարների համատեղ ջանքերի արդյունք, որը նպատակ ուներ ոլորտում բարեփոխումների օրակարգն առաջ մղելու հետխորհրդային համատեքստից դեպի կատարողականի նոր մակարդակ՝ համահունչ միջազգային միտումներին: Ծրագրի շրջանակներում ձևավորված թիմին չորս տարիների ընթացքում ուղղորդել է Եվրոպայում մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և իրականացման հսկայածավալ փորձը՝ ձգտելով առաջադրել Որակավորումների ազգային շրջանակի հետ մասնագիտության կրթական ծրագրերի համադրելիության երաշխավորման, ինչպես նաև այդ համադրելիության որակի ապահովման նորագույն մոտեցումներ:

INQAAHE-ն բարձրագույն կրթության որակի ապահովում իրականացնողների միջազգային ցանց է: Այն աշխարհում երբևէ ձևավորված միակ ցանցն է, որը ստեղծվել է 1991թ.՝ ապահովելով համագործակցության արդյունավետ հարթակ, ինչպես նաև նպաստելով որակի ապահովման գործընթացներում նորարարությունների և հետազոտության զարգացմանը: Այսօր INQAAHE-ն ունի մոտ 350 անդամ, որոնք համախմբվել են ամբողջ աշխարհից և իրականացնում են որակի արտաքին և ներքին ապահովում: Անգնահատելի մեծ է INQAAHE միջազգային ցանցի դերը բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացներում, և այն հաջողությամբ շարունակում է ծառայել իր հեղինակավոր առաքելությանը:

ALIGN ծրագրի քառամյա գործունեությունը լի էր մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և իրականացման հետխորհրդային համակարգի ուսումնասիրությամբ, եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատությունների տարիների ընթացքում կուտակված փորձի փոխանակմամբ, ինչպես նաև ծրագրի ողջ թիմի քրտնաջան աշխատանքով, որը միտված էր մշակելու և սահմանելու համեմատական, և, միևնույն ժամանակ, օրինակելի մեթոդներ, որոնք ապահովելու են կրթական ծրագրերի համադրելիությունը և դրանց համաձայնեցումը ՀՀ-ի, ՌԴ-ի և Ուկրաինայի սոցիալ-տնտեսական պահանջների հետ:

Սույն ուղեցույցը ALIGN ծրագրի հայաստանյան թիմի բեղմնավոր աշխատանքի արդյունքն է, որը ՀՀ-ում բարձրագույն կրթական համակարգի, ինչպես նաև մասնագիտության կրթական ծրագրերի՝ ՀՀ որակավորումների ազգային շրջանակի հետ համադրելիության ապահովման մեկնարկի լավագույն օրինակն է, ինչը կապահովի որակավորումների համապատասխանեցումը ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում: Սույն փաստաթղթի մշակման գործում իրենց մեծ ներդրումն ու դերն են ունեցել եվրոպական գործընկեր հաստատությունները և Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ), ինչպես նաև Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի (ԵՊԼՀ), Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) և Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի (ՀԳՊԱ) աշխատանքային խմբերը, որոնց միացյալ ջանքերի շնորհիվ ստեղծվեց ուղեցույցը՝ հիմք դնելով ՀՀ բարձրագույն կրթության համակարգում դրա հետագա և ավելի ծավալուն կիրառմանը:

Հույս ունենք, որ այն օգտակար կլինի ոլորտի թիրախային շահակիցների համար՝ օժանդակելով նրանց ՀՀ ՈԱԾ-ի հետ համադրելիության իրականացման և դրա ապահովման գործընթացում:

Դեյվիդ Վուդհաուսը (INQAAHE միջազգային ցանցի նախկին նախագահներից և հիմնադիրներից), Քարոլ Բոբին (INQAAHE միջազգային ցանցի նախկին նախագահներից), Իրինգ Վասերը (INQAAHE միջազգային ցանցի խորհրդի նախկին անդամ) եղել են INQAAHE ցանցից ALIGN ծրագրի նախաձեռնող թիմը:

Ծրագրում ներգրաված բոլոր շահակիցները բարձր են գնահատում ծրագրի մշակման և իրականացման գործընթացում INQAAHE միջազգային ցանցի կողմից ստացված նպատակային ուղղորդումը:

Մեր երախտիքի խոսքն ենք նաև հայտնում Եվրոպական Հանձնաժողովին և Կրթության, տեսաձայնային և մշակույթի գործադիր գործակալությանը (EACEA), Հայաստանի, Ռուսաստանի և Ուկրաինայի Էրազմուս+ ազգային գրասենյակներին, կրթության նախարարություններին, որակի ապահովման մարմիններին, ուսանողների և գործատուների միություններին, ինչպես նաև ծրագրի համակարգող ԵՊԼՀ-ին ծրագրի իրականացման և Հայաստանում, Ռուսաստանում ու Ուկրաինայում բարձրագույն կրթական համակարգի կայուն զարգացման գործընթացում անգնահատելի ներդրման և աջակցության համար:

Սուսաննա Կարախանյան, հասարակական գիտությունների դոկտոր
INQAAHE նախագահ, ALIGN ծրագրի հեղինակ և կառավարման թիմի անդամ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 91
ԳԼՈՒԽ 1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ . 92
Ուղղահայաց համապատասխանեցում 93
Հորիզոնական կամ կառուցողական համապատասխանեցում 99
ԳԼՈՒԽ 2. ՄԿԾ-ՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 104
Համապատասխանեցմանը նախորդող գործողություններ 104
Համապատասխանեցման փուլի գործողություններ 106
Համապատասխանեցմանը հաջորդող փուլի գործողություններ 111
ԳԼՈՒԽ 3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ 112
Համապատասխանության ստուգմանն ուղղված քայլեր 112
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 118
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 120
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՐՏԱՑՈԼՈՂ ԲԱՅԵՐ 120
Բլումի տաքսոնոմիայից բխող գործողության բայեր 121
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄԿԾ-Ի ԵՎ ՈԱԾ-Ի ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 123
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈԱԾ. ԿԱՊԸ ՄԿԾ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐՅԴՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 125
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՄԿԾ-Ի ԵՎ ՄՈԴՈՒԼԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ 127
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄԿԾ ՁԵՎԱՆՄՈՒՇՆԵՐ 135
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՍՏԻՃԱՆ (ԴՈՒԲԼԻՆՅԱՆ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ) 135
ՄԿԾ ուսումնառության արդյունքներ. մակարդակ X 136
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԱՍՏԻՃԱՆ (ԴՈՒԲԼԻՆՅԱՆ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ) 137
ՄԿԾ ուսումնառության արդյունքներ. մակարդակ X 138
Մոդուլի ուսումնառության արդյունքների չափանիշներ 146
Մոդուլի կառուցողական համապատասխանեցման ձևանմուշ 147
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (փաթեթ) 148
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ 149
Դասավանդման ձևերը 149
Դասավանդման և ուսումնառության մեթոդները 150
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 153
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՄԿԾ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 160

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ՄԿԾ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 167

ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՄԿԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՓՈՒԼԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ 169

1. Մոդուլի/Ուսումնական միավորի անվանումը, կրեդիտները և գնահատման ձևերը 170

2. ՄԿԾ առաջարկվող ժամանակացույց: Փուլ 1 170

3. ՄԿԾ առաջարկվող ժամանակացույց: Փուլ 2 171

4. ՄԿԾ առաջարկվող ժամանակացույց: Փուլ 3 172

5. ՄԿԾ առաջարկվող ժամանակացույց. Փուլ 4 173

ՀԱՎԵԼՎԱԾ 12. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ՁԵՎԱՉԱՓ 174

Մասնագիտության կրթական ծրագրի բենչմարքինգի ձևաչափ..... 174

ՄԿԾ-ով սահմանված ուսումնառության արդյունքների գնահատում 175

Ուսանողների ուսումնառության արդյունքներ կամ բենչմարքներ..... 176

ՄԿԾ բենչմարքինգի ձևաչափ 177

ՀԱՎԵԼՎԱԾ 13. ԱՐՏԱՔԻՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ (ՆԱԽՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ)..... 181

ՀԱՎԵԼՎԱԾ 14. ՀՀ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ (6-ՐԴ և 7-ՐԴ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ) 187

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 189

Շնորհակալագիր 195

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համապատասխանեցումը սովորաբար ընկալվում է որպես բովանդակային չափորոշիչների համախմբի և դրանց չափման համար կիրառվող գնահատման համաձայնեցում: Կրթության ոլորտում համապատասխանեցումը ենթադրում է որոշակի մասնագիտությունների կրթական ծրագրերի բարելավում ներքին որոշումների ընդունմամբ՝ փաստերի վրա հիմնված որակի ներքին ապահովման շրջափուլային և շարունակական գործընթացի միջոցով: Համապատասխանեցումը որևէ կերպ չի սահմանափակում կրթական հաստատությունների կամ ամբիոնների ակադեմիական ինքնավարությունը՝ մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային կամ մեթոդական մշակման տեսանկյունից:

Կրթության ոլորտում համապատասխանեցումը հիմնականում վերաբերում է կրթական ծրագրերով նախատեսված ուսումնառության արդյունքներին կրթական տարբեր մակարդակներում և տարբեր տեսանկյուններից, հետևաբար կրթության ոլորտում հնարավոր է համապատասխանեցում իրականացնել հաստատության կողմից որդեգրված և կիրառվող վերջնարդյունքահեն մոտեցման դեպքում:

Հայերենում զուգահեռաբար կկիրառվի երկու եզրույթ՝

- «համապատասխանեցում»՝ անվանելու համապատասխանության ապահովմանը միտված գործողությունների համախումբը և ողջ գործընթացը,
- «համապատասխանություն»՝ անվանելու այդ գործողությունների արդյունքում ստացված որակական իրողությունը:

Հաշվի առնելով կրթության ոլորտում ներգրավված շահառուների մեծ թիվը, ազգային և միջազգային կարգավորումների առավել լայն համատեքստը, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջները՝ համապատասխանեցումը ենթադրում է մի շարք տրամաբանական հաջորդական քայլեր և գործողություններ, ինչպես նաև այնպիսի գործիքակազմի կիրառում, որը թույլ կտա փաստաթղթավորել համապատասխանեցմանը միտված ուսումնական ծրագրի մշակման տրամաբանությունը և բովանդակությանը վերաբերող որոշումները:

Մասնագիտության կրթական ծրագրերը համապատասխանեցվում են երկու հարթություններում՝ ուղղահայաց և հորիզոնական: Այլ կերպ ասած՝ ՄԿԾ-ների համապատասխանեցումն իրականացվում է ստորակարգային եղանակով, այսինքն՝ համընդգրկուն և վայրընթաց կարգավորման համակարգով, ինչպես նաև ներքին համապատասխանեցմամբ՝ ապահովելով դասավանդման և ուսումնառության գործընթացների ու գնահատման մեթոդների ներդաշնակությունը (կառուցողական համապատասխանեցում, Biggs, 1999): Համապատասխանեցման գործընթացը խթանելու համար հաստատությանն անհրաժեշտ է քաղաքականության և ընթացակարգերի փաթեթ:

ՄԿԾ-ով սահմանված ուսումնառության արդյունքների համապատասխանությունը առկա շրջանակներին (օրինակ՝ որակավորումների ազգային շրջանակին), ինչպես նաև ծրագրի տարրերի ներքին համապատասխանությունը սովորաբար ուսումնասիրվում է հավատարմագրման/վավերացման գործընթացի միջոցով:

Այսպիսով, որակավորումների ազգային շրջանակին մասնագիտության կրթական ծրագրերի համապատասխանեցման համար առաջարկվող այս ուղեցույցը ներառում է առաջարկություններ ծրագրի համապատասխանեցման մեթոդաբանական և ընթացակարգային խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև տրամադրում է մի շարք գործիքներ, որոնք կարող են առավել հեշտացնել համապատասխանեցման և այդ ուղղությամբ ձեռք բերված արդյունքների գնահատման գործընթացները:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Որակի ներքին ապահովման համատեքստում ՄԿԾ-ների՝ ՈԱԾ-ին համապատասխանեցման և համապատասխանության ներքին ստուգման հիմնական պատասխանատվությունը կրում է բուհը: Իրականացված, հաջողությամբ ավարտին հասցված և հիմնավորված համապատասխանեցումը կրթական ծրագրերի որակն ապահովող նախապայման է: Համապատասխանության ապահովման ձեռնարկված, իրականացված և հիմնավորված գործընթացը նախապայման է ՄԿԾ որակյալ գործունեության համար:

ՄԿԾ-ների համապատասխանեցումը կարող է իրականացվել երկու դեպքում՝ նոր ՄԿԾ մշակելիս կամ արդեն առկա ծրագիրը վերանայելիս: Երկու դեպքում էլ նպատակը ուսումնառության ակնկալվող այնպիսի արդյունքների (ՈՒԱԱ) մշակումն է, որոնք համապատասխանում են ՈԱԾ-ի և նորմատիվ այլ փաստաթղթերի (օրենսդրություն, հաստատության առաքելություն և այլն) պահանջներին:

Հետևաբար այս երկու դեպքերը կդիտարկենք որպես իրար շատ նման իրողություններ՝ իրականացման ընթացքում դրսևորվող աննշան տարբերություններով, որոնք, սակայն, էապես չեն ազդի ձեռնարկվող քայլերի հաջորդականության վրա:

Քանի որ ՄԿԾ-ների համապատասխանեցման սկզբունքները սերտորեն կապված են մասնագիտության կրթական նոր ծրագրի մշակման և ՄԿԾ-ի՝ որպես փաստաթղթի, ձևավորման հիմքում ընկած սկզբունքների հետ, ուղեցույցի այս բաժնում հակիրճ կանդրադառնանք ՄԿԾ մշակման գործընթացում առաջացող հիմնական խնդիրներին:

Մասնագիտության կրթական (բարձրագույն, մասնագիտական կամ արհեստագործական) ծրագիրը սահմանվում է որպես աստիճանաշնորհման միտված ուսումնական ծրագիր, որն ակնկալում է սովորողի կողմից գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերում ֆորմալ ինստիտուցիոնալ դասավանդման միջոցով՝ լրացված աշակերտությամբ, ստաժորությամբ/պրակտիկայով, վերապատրաստումներով և աշխատանքի տեղավորմամբ (հատկապես աշխատանքը ներառող/ինտեգրող ուսուցման դեպքում):

Այսպիսով, ՄԿԾ-ն ինստիտուցիոնալացված բովանդակային միավոր է, որն ունի հստակ նախասահմանված և ամրագրված առաքելություն, նպատակներ և խնդիրներ, ինչպես նաև ուսումնառության ակնկալվող արդյունքներ, որոնք արտացոլում են այն գիտելիքի, հմտությունների ու կարողությունների ողջ պաշարի հայեցակարգային նախնական շրջանակը, որը պետք է ենթադրաբար ունենա ծրագիրը հաջողությամբ ավարտած ցանկացած շրջանավարտ:

Ինչպես ավելի վաղ նշվել է այս փաստաթղթում, համապատասխանեցումը ուսումնական ծրագրի շրջափուլային և ներքին բարելավման գիտակցված գործընթաց է, որը միտված է սահմանված որակավորման և մասնագիտական չափորոշիչների հետ ուսումնական ծրագրի լիարժեք ներդաշնակության հաստատման: Այսուհանդերձ, ՄԿԾ մակարդակում համապատասխանեցման գործընթացի մասին խոսելիս կարևոր է հաշվի առնել, որ այն պետք է իրականացվի երկու հարթություններում/չափումներում՝ ապահովելու համար՝

1. ներդաշնակություն ՄԿԾ-ով սահմանված ուսումնառության ակնկալվող արդյունքների և ազգային մակարդակում սահմանված չափորոշիչների միջև (ուղղահայաց համապատասխանեցում) (հնարավոր և, ցանկալի է, կանոնավոր ազգային ու միջազգային բենչմարքինգի իրականացմամբ՝ օգտագործելով երկրում և արտասահմանում առկա լավագույն փորձը),
2. դասավանդման, ուսումնառության և գնահատման քաղաքականության ու գործընթացների, ինչպես նաև կրթական միջավայրի, ռեսուրսների և օժանդակ ենթակառուցվածքի միջև կապը, տրամաբանական հաջորդականությունն ու շարունակականությունը կրթական ծրագրի իրականացման ընթացքում (հորիզոնական/կառուցողական համապատասխանեցում):

Ուղղահայաց համապատասխանեցում

ՄԿԾ-ների ուղղահայաց համապատասխանեցումը պետք է իրականացվի երկու մակարդակներում.

- ՈԱԾ-ի նկարագրիչներ - ՄԿԾ ուսումնառության ակնկալվող արդյունքներ,
- ՄԿԾ ուսումնառության վերջնարդյունքներ - ՄԿԾ ուսումնական միավորի[1] ուսումնառության վերջնարդյունքներ:

ՈԱԾ-ի և ՄԿԾ ուսումնառության արդյունքների համապատասխանեցման թվացյալ նեղ շրջանակը ներառում է կրթական միջավայրին բնորոշ մեծ թվով բաղադրիչներ, որոնք պետք է հաշվի առնել ուղղահայաց համապատասխանեցման գործընթացում: Մասնավորապես, ՄԿԾ-ները պետք է մշակվեն և ապահովվեմ հարակից/վերաբերելի արդյունքներով, որոնք պետք է համապատասխանեն բուհի առաքելությանը և ուղղվածությանը՝ներառելով տարածաշրջանային համատեքստը: Սա նշանակում է, որ ուղղահայաց համապատասխանեցման մասին խոսելիս անհրաժեշտ է չընդհատվող և տրամաբանական կապ ապահովել որոշակի որակավորման և աստիճանի համար ՈԱԾ-ի նկարագրիչների, հաստատության առաքելության և ՄԿԾ-ով սահմանված ուսումնառության ակնկալվող արդյունքների միջև:

Վերոնշյալը անհրաժեշտություն է ստեղծում ուսումնական ծրագրի մշակման գործընթացում խորությամբ ընկալելու ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցումը, ինչպես նաև հավատարիմ լինելու որակի կառավարման՝ ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցմանը, քանի որ սա հնարավոր է դարձնում ՄԿԾ ուսումնառության արդյունքների համապատասխանեցումը ՈԱԾ-ում սահմանված արդյունքներին (Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի շահակիցների ուղեցույց):

ՈԱԾ-ը ներկայացնում է որակավորումների միջև առկա փոխադարձ կապը և միտված է ինտեգրելու և համակարգելու ազգային որակավորման ենթահամակարգերը, ինչպես նաև բարելավելու թափանցիկությունը, հասանելիությունը, առաջխաղացումը և շնորհվող որակավորումների որակը՝հաշվի առնելով աշխատաշուկայի և քաղաքացիական հասարակության

[1]Այս ուղեցույցում «ուսումնական միավոր» եզրույթը կիրառվում է որպես «մոդուլ» և «դասընթաց» բառերի ավելի վերացական համարժեք: Հետևաբար, «ուսումնական միավոր» եզրույթն այս փաստաթղթում վերաբերում է դասավանդման այն միավորին, որն ունի հստակ սահմանված ուսումնառության արդյունքներ և ավարտվում է ամփոփիչ գնահատմամբ

պահանջները: Այն մասնավորապես նկարագրում է որակավորման մակարդակների ստորակարգությունը. յուրաքանչյուր որակավորում կապված է այդ մակարդակներից մեկին:

Մեկ այլ բնութագրմամբ՝ ՈԱԾ-ը ազգային մակարդակում կամ կրթական համակարգի որոշակի մակարդակում միակնկարագիրն է, որը հստակեցնում և պարզաբանում է բարձրագույն կրթության ոլորտում շնորհվող որակավորումների միջև գոյություն ունեցող կապը: ՈԱԾ-ը «որակավորում» եզրույթի նկատմամբ նոր մոտեցում է դրսևորում՝ շեշտադրելով ուսումնառության արդյունքների կարևորությունը և հստակեցնելով, թե ինչ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ պետք է ունենա շրջանավարտը՝ տվյալ որակավորումը ստանալու համար:

Որակավորումների ազգային շրջանակները միջազգայնորեն հասկանալի են և հստակ նկարագրում են բարձրագույն կրթության ոլորտի բոլոր որակավորումները և ուսումնական այլ նվաճումներ՝ դրանք ներդաշնակորեն կապելով միմյանց (Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի շահակիցների ուղեցույց) [2]:

Որակավորման նկարագրիչները ընդհանրական սահմանումներ են, որոնք նկարագրում են ուսումնառության արդյունքները՝ ըստ ՈԱԾ-ի յուրաքանչյուր մակարդակում տվյալ որակավորմանը համապատասխանող գիտելիքների, կարողությունների և հմտությունների, դրանց ծավալի, բարդության ու բազմազանության: Նախանշված արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ ուսումնառության ծավալին առնչվող դիտարկումները կատարվում են ՄԿԾ մշակման փուլում:

ԳԻՏԵԼԻՔ

ԳԻՏԵԼԻՔ

Գիտելիքն այն է, ինչ շրջանավարտը գիտի և հասկանում է: Գիտելիքը նկարագրվում է ըստ ծավալի, խորության, տեսակի և բարդության:

Խումբ	Ենթախումբ	Նկարագիր
Գիտելիք	Ծավալ	Որքա՞ն ընդգրկուն են սովորողի գիտելիքները:
	Խորություն	Որքա՞ն խորքային և հիմնավոր են սովորողի գիտելիքները:
	Գիտելիքի տեսակներ	Ի՞նչ բնույթի կամ որակի գիտելիքների է տիրապետում սովորողը:
		✓ **Փաստացի գիտելիքներ՝** տերմինաբանության, առանձնահատուկ մանրամասների և բաղադրիչների իմացություն:
		✓ **Կոնցեպտուալ գիտելիքներ՝** դասակարգումների, կարգերի, սկզբունքների և ընդհանրացումների, տեսությունների, մոդելների և կառուցվածքների իմացություն:
		✓ **Ընթացակարգային գիտելիքներ՝** առարկայական հատուկ հմտությունների, հնարների ու մեթոդների,

[2] Սեկտորալ որակավորումների շրջանակին վերաբերող հարցը վերջին տարիներին բարձրացվել է որոշ բնագավառներում (մասնագիտական գործունեության կլաստերներ՝ հիմնված տնտեսական գործառույթների, արտադրանքի, ծառայությունների կամ տեխնոլոգիաների վրա): Նպատակն է սահմանել տարբեր ոլորտների կողմից շնորհվող տեսանելի և հասկանալի որակավորումներ, ազգային և եվրոպական իշխանությունների հետ փոխադարձ վստահություն ձևավորել:

		համապատասխան ընթացակարգերի ճիշտ օգտագործման չափանիշների իմացություն:
		✓ **Մետաճանաչողական գիտելիքներ՝** ռազմավարական գիտելիքներ, ճանաչողական/իմացական առաջադրանքների մասին գիտելիք, ինքնաճանաչում:

ՀՄՏՈՒԹՅՈՒՆ

Հմտությունն այն է, ինչ շրջանավարտը կարող է անել: Հմտությունները նկարագրվում են ըստ ծավալի և բարդության և ներառում են ճանաչողական, տեխնիկական, հաղորդակցման, ստեղծագործական, միջանձնային հարաբերությունների և ընդհանրական հմտություններ:

Խումբ	Ենթախումբ	Նկարագիր
Հմտություն	Ծավալ	Ի՞նչ ընդգրկում/ծավալ ունեն սովորողի ձեռք բերած ֆիզիկական, մտավոր, սոցիալական և այլ հմտությունները:
	Ընտրողականություն	Սովորողն ինչպե՞ս է ընտրում ձեռք բերած հմտությունները մի շարք հիմնախնդիրներ լուծելու համար: Ի՞նչ բարդության խնդիրներ կարող է լուծել սովորողը՝ օգտագործելով ձեռք բերված հմտությունները, և ինչպե՞ս է լուծում այդ խնդիրները:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Կարողությունը գիտելիքների և հմտությունների կիրառումն է համատեքստում: Արտահայտվում է ըստ ինքնավարության, պատասխանատվության և հաշվետվողականության: Համատեքստը կարող է լինել կանխատեսելի և անկանխատեսելի, ծանոթ և անծանոթ, առօրեական և ոչ առօրեական:

Խումբ	Ենթախումբ	Նկարագիր
Կարողություն	Ինքնավարություն և պատասխանատվություն	Սովորողն ինչպե՞ս է պատասխանատվություն ստանձնում անձնապես և խմբում: Սովորողն ինչպե՞ս է կիրառում ձեռք բերված հմտությունները այլոց հետ փոխգործակցելիս կամ ինքնուրույնաբար աշխատելիս:
	Ինքնազարգացում	Սովորողը որքանո՞վ է կարողանում գործել նոր միջավայրում, ձեռք բերել նոր գիտելիքներ ու հմտություններ և դրանցով համալրել իր ունեցած գիտելիքների ու հմտությունների պաշարը:
	Դերը համատեքստում	Սովորողը կարո՞ղ է արդյոք կիրառել իր գիտելիքներն ու հմտությունները համապատասխան համատեքստերում:

http://www.zu.ac.ae/main/files/contents/assessment_resource/support_docs/QFEmirates_OutcomesGuide.pdf (էջ 5)

ՈԱԾ-ի և ՄԿԾ-ի միջև համապատասխանության ապահովման համար անհրաժեշտ է փաստերով հիմնավորել ՄԿԾ ուսումնառության ակնկալվող արդյունքների[3] և ՈԱԾ-ի նկարագրիչների համապատասխանությունը: Ուսումնառության արդյունքների կիրառումը հնարավորություն է տալիս հստակ տարբերակելու ՄԿԾ-ով շնորհվող որակավորումները, օրինակ՝ բակալավրի/մագիստրոսի աստիճան: Բացի այդ, ուսումնառությթան արդյունքների վրա հիմնված մոտեցումը հնարավորություն է ընձեռում համեմատելու կրթական ծրագրերը միջազգային այլ ծրագրերի հետ, կատարելու բենչմարքինգ:

Խորհուրդ է տրվում յուրաքանչյուր ՄԿԾ-ով նախատեսել առավելագույնը 10-15 ուսումառության արդյունք: Սրանք այն գիտելիքների, հմտությունների և կարողությունների ընդհանրական նկարագիրն են, որոնք ձևավորում են ՄԿԾ շրջանավարտի մասնագիտական վարքագիծը:

Այն ակտիվ բայերի ցանկը (ներկայացված է «Հավելվածներ» բաժնում և մշակված է ըստ ՈԱԾ-ի խմբերի և ենթախմբերի, ինչպես նաև Բլումի տաքսոնոմիայի), որոնցով արտահայտվում է պատշաճ կազմակերպված դասավանդման և ուսումնառության գործընթացների միջոցով ուսումնառության արդյունքների ձեռքբերումը և նպատակային գնահատման միջոցով դրանց չափումը, կարող է օգտակար լինել ՄԿԾ ուսումնառության արդյունքների ձևակերպման ընթացքում:

Այդ բայերի առնչությամբ օգտակար է կիրառել նաև նաև Սոլո տաքսոնոմիան (կամ Սոլո և Բլումի տաքսոնոմիաները միասին): Օրինակ՝ «նկարագրել» բայը, ըստ էության, նշանակում է «թվարկել բավարար քանակի կետեր» և ըստ Սոլո տաքսոնոմիայի՝ բազմաշերտ է, իսկ «բացատրել» բայը պահանջում է այլ հասկացությունների հետ փոխառնչությունների վերհանում: Այս բայերը վերաբերում են պատմողական գիտելիքին. ի՞նչ գիտեն ուսանողները թեմայի մասին: Այս բայերը չեն հուշում, թե ուսանողն ինչ կարող է անել այդ թեմայի իմացության շնորհիվ, ի տարբերություն, օրինակ, «նախագծել» բայի: Ճիշտ ընտրված բայը թույլ է տալիս սահմանել ուսումնառության ակնկալվող արդյունքի մակարդակը:

Հաշվի առնելով ՄԿԾ-ի և ՄԿԾ ուսումնական միավորի ուսումնառության արդյունքների մշակման մոտեցումները, ինչպես նաև այնպիսի գործիքակազմի ընտրության կարևորությունը, որը հստակ համապատասխանություն կապահովի ուսումնառության արդյունքների և ՈԱԾ-ի նկարագրիչների միջև, անհրաժեշտ է կիրառել համապատասխան հավելվածում ներկայացված բայերը, որոնք դասակարգված են ըստ ՈԱԾ-ի խմբերի և ենթախմբերի: Այս բայերով ցույց կտրվի քիչ թե շատ ուղղակի կապը ՈԱԾ-ի նկարագրիչների և ՄԿԾ մակարդակում ուսումնառության արդյունքների միջև, որոնք իրենց հերթին ՄԿԾ ուսումնական միավորի մակարդակում կարող են տրոհվել ուսումնառության ավելի փոքր արդյունքների:

ՄԿԾ ուսումնառության ակնկալվող արդյունքների ուղղահայաց համապատասխանեցման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել նաև հետևյալ ելակետային փաստաթղթերն ու դրույթները՝

- ՄԿԾ առաքելությունը (որը համահունչ է հաստատության ընդհանուր առաքելությանը),

[3] Այստեղ անհրաժեշտ է շեշտադրել ուսումնառության ակնկալվող արդյունքների և ուսումնառության վերջնարդյունքների տարբերությունը: Ուսումնառության ակնկալվող արդյունքներն այն արդյունքներն են, որոնք ծրագրի համակարգողը կամ դասախոսը նախատեսում է որպես ուսումնական գործունեության արդյունքներ, որոնք պետք է ձեռք բերվեն ուսումնառության ընթացքում՝ հետագայում որակավորում ստանալու համար: Ուսումնառության վերջնարդյունքները ներկայացնում են այն գիտելիքների ու հմտությունների համախումբը և դրանց կիրառումը, որոնք անձը ձեռք է բերել և կարող է դրսևորել որպես ուսումնառության արդյունք:

- ՄԿԾ հիմնական նպատակը և խնդիրները,
- ՄԿԾ ուսումնառության ակնկալվող արդյունքները,
- ՄԿԾ ուսումնական միավորները (որոնցով ձևավորվում է ծրագրի ամբողջականությունը),
- ՄԿԾ առանձին ուսումնական միավորի՝ որպես ծրագրի ծավալուն և համեմատաբար անկախ կառուցամասի, ուսումնառության արդյունքների կայունությունն ու հուսալիությունը,
- ՄԿԾ ուսումնական միավորների ուսումնառության ակնկալվող արդյունքների (որոնցով ձևավորվում են ՄԿԾ ուսումնառության ակնկալվող ընդհանրական և համապարփակ արդյունքները) համապատասխանությունը և ստորակարգությունը:

Հաստատության առաքելությունը հստակ սահմանված, համընդգրկուն և հրապարակված դրույթ է, որը բնորոշ է տվյալ հաստատությանը և համապատասխանում է բարձրագույն կրթության պահանջներին: Առաքելությունը վերաբերում է դասավանդմանը, ուսումնառությանը, հետազոտությանը և հանրային ծառայություններին: Առաքելությունը ընդհանրական, բայց հակիրճ ձևակերպում է, որը նախանշում է հաստատության գործունեության նպատակը: Ուսանողների ուսումնառության արդյունքները բխում են հաստատության առաքելությունից: **ՄԿԾ առաքելությունը** պետք է համահունչ լինի հաստատության ընդհանուր առաքելությանը: Սա էական նշանակություն ունի ՄԿԾ բովանդակությունը ծրագրի իրական շահակիցների ավելի լայն շրջանակին ներկայացնելիս, քանի որ դժվար թե հետազոտական ուղղվածությամբ հաստատությունը կիրառական հմտություններ զարգացնող ծրագրեր իրականացնի:

ՄԿԾ առաքելությունը՝ որպես ծրագրի բովանդակության և խնդիրների համապարփակ նկարագիր, սովորաբար, արտացոլվում է **նպատակներում և խնդիրներում**: Սրանք ավանդաբար ավելի հակիրճ և փոքր նկարագրիչներ են, որոնք բխում են ՄԿԾ ընդհանուր առաքելությունից և նպատակներից: **Նպատակներն** ընդհանրական տերմիններով նկարագրում են ուսումնառության ընդգրկուն արդյունքներն ու հայեցակարգերը (ինչ եք ցանկանում, որ սովորի ուսանողը): Նպատակները պետք է նախատեսեն ծրագրի **առավել կոնկրետ կրթական** (ուսումնական/վարքագծային) **խնդիրների** շրջանակ, ինչպես նաև համապատասխանեն ՄԿԾ և հաստատության առաքելություններին:

Ուսումնական/ վարքագծային խնդիրները նկարագրում են դասավանդման գործընթացի նախանշված նպատակներն ու ակնկալվող արդյունքները և հիմք են ստեղծում գնահատման գործընթացի համար: Խնդիրները հակիրճ, հստակ սահմանումներ են, որոնք նկարագրում են դասավանդման ավարտին նախատեսվող ուսումնառության արդյունքները, այն է՝ որոշակի հմտություններ, արժեքներ և դիրքորոշումներ, որ ուսանողները պետք է դրսևորեն բավարարելով նվազագույն պահանջվող մակարդակները: Խնդիրները մանրամասն նկարագրում են այն վարքագիծն ու գործելակերպի առանձնահատուկ տեսակները, որոնք ուսանողները կկարողանան դրսևորել և իրականացնել կրթական ծրագրի ուսումնական միավորի դասավանդման ավարտին, ինչպես նաև այն պայմաններն ու չափանիշները, որոնք սահմանում են ուսանողի առաջադիմության անցողիկ մակարդակը:

ՄԿԾ խնդիրները սահմանելիս հարկավոր է ուշադրությունը կենտրոնացնել ուսանողի

ուսումնառության, այլ ոչ թե դասախոսի դասավանդման վրա՝ նկարագրելով, թե ուսանողն ինչպես պետք է ցուցադրի իր յուրացրած գիտելիքները, հմտություններն ու կարողությունները: ՄԿԾ նպատակները սովորաբար ներառվում են կրթական ծրագրի նկարագրերում, ուղեցույցներում և այլ փաստաթղթերում և պետք է հրապարակվեն առցանց ու տարածվեն շահառուների շրջանում (պրոֆեսորադասախոսական կազմ, դեկաններ, վարչական կազմ և ուսանողներ): ՄԿԾ նպատակները հիմք են հանդիսանում ծրագրի ուսումնական միավորների մշակման համար, ինչպես նաև խթանում են ուսանողակենտրոն ուսուցումը և գիտակցված ու նպատակներին հետամուտ դասավանդումը:

Ինչպես երևում է վերը թվարկված ելակետային դրույթներից, ուսումնառության արդյունքները ներկայացված են տարբեր մակարդակներում, մասնավորապես՝

- **ՄԿԾ մակարդակում** (ուսանողը պետք է ձեռք բերած լինի ծրագիրն ավարտելիս),
- **ուսումնական միավորի մակարդակում** (ուսանողը պետք է ձեռք բերած լինի տվյալ ուսումնական միավորն ավարտելիս):

ՄԿԾ ուսումնառության արդյունքները շեշտադրում են, թե ինչ պետք է սովորի ուսանողը, այլ ոչ թե ինչ պետք է ընդգրկի դասավանդումը: Սա պետք է իմանան բոլոր հիմնական շահառուները՝ ներառյալ պրոֆեսորադասախոսական կազմը, պրակտիկայի ղեկավարները, ուսանողներին օժանդակող անձնակազմը և ուսանողները: ՄԿԾ ուսումնառության արդյունքներն են ուղղորդում դասընթացի և ուսումնական ծրագրի պլանավորումը: Դրա շնորհիվ ուսանողները սովորում են համակցված ուսումնական ծրագրով և քաջալերվում են դառնալու գիտակից ուսումնառողներ, որոնք իրենք են ուղղորդում և վերահսկում իրենց ուսումնառությունը: Ուսումնառության արդյունքները շեշտադրում են գնահատումը և խթանում են ուսանողների ուսումնառության վերաբերյալ քննարկումները պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում:

Ուսումնառության արդյունքները սահմանումներ են, որոնք նկարագրում են այն կարևորագույն և հիմնարար գիտելիքները, որ ուսանողները պետք է ձեռք բերեն: Կրթության ոլորտում ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցումը ենթադրում է ՄԿԾ-ի և ուսումնական ծրագրի մշակման, բովանդակության ընտրության, դասավանդման և գնահատման հիմքում դնել այն ինտեգրված գիտելիքների, հմտությունների և արժեքների վերլուծությունը, որոնք անհրաժեշտ են թե՛ ուսանողներին և թե՛ հասարակությանը: Ուսումնառության արդյունքներն ավելի ուսանողակենտրոն են և նկարագրում են, թե սովորողը ինչ պետք է իմանա և կարողանա անել որոշակի իրավիճակում: Ուսումնառության ձևակերպված արդյունքները ուսանողներին նաև գաղափար են տալիս այն մասին, թե ինչպիսի փոփոխություններ են ակնկալվում իրենցից ուսումնառության ավարտին:

Ուսումնառության արդյունքները պետք է սահմանեն ուսանողների ձեռքբերումների նվազագույն մակարդակը: ՄԿԾ ուսումնառության արդյունքները սահմանում են, թե ուսանողը ինչ պետք է իմանա, հասկանա և կարողանա անել ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո:

Այսպիսով, ՄԿԾ մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել բարձրագույն կրթության համակարգում տեղի է ունեցած այն արմատական փոփոխությունը, որի արդյունքում սովորողը տեղափոխվել է ուսուցման և ուսումնառության բոլոր գործընթացների կենտրոն ոչ միայն որպես

սպառող կամ շահառու, այլ նաև որպես ակտիվ գործող անձ: Հաշվի առնելով ուսանողակենտրոն ուսուցումը և ուսումնական ծրագրի մշակման՝ ուսումնառության արդյունքների վրա հիմնված սկզբունքը՝նպատակահարմար է կիրառել շրջափուլային երկկուղղություն մոտեցում՝ վայրընթաց շարժ՝ առավել ընդհանրական ուսումնառության արդյունքներից դեպի ՄԿԾ ուսումնական միավորների անհատական ուսումնառության արդյունքներ, և վերընթաց շարժ, որը միտված է փաստելու ավելի ցածր մակարդակի ուսումնառության արդյունքների կուտակումը և դրանցով ավելի բարձր մակարդակի ուսումնառության արդյունքների համալրումը:

Ուսումնական միավորը ՄԿԾ բաղկացուցիչ մաս է և ապագա սովորողներին հնարավորություն է ընձեռում ուսումնառության ակնկալվող նվազագույն արդյունքները վստահաբար ու խելամտորեն ձեռք բերելու իրենց ջանքերով ու կրթական միջավայրի, ուսուցման ձևի, աշխատակիցների աջակցության, նախատեսված ծանրաբեռնվածության, տրամադրված ռեսուրսների և ուսումնառության ակնկալվող արդյունքների գնահատման միջոցով:

ՄԿԾ ուսումնական միավորի ուսումնառության արդյունքները պետք է հստակ նկարագրեն, թե ուսանողը ինչ պետք է իմանա և կարողանա անել դասընթացի ավարտին, կարճ ասած՝ դրանք պետք է չափելի լինեն: Բացի այդ, ուսումնական միավորի ուսումնառության արդյունքները ձևավորում են դասընթացի բովանդակությունը և սահմանում ուսուցման և ուսումնառության գործընթացներում իրականացվելիք գործունեության տեսակները: Ուսումնական միավորի ուսումնառության արդյունքները նաև գնահատման հիմքն են, ուսանողներին տեղեկացնում են, թե իրենցից ինչ է ակնկալվում և նպաստում են ՄԿԾ ուսումնառության մեկ կամ ավելի արդյունքների ձեռքբերմանը:

Ակնհայտ է, որ ուղղահայաց համապատասխանեցման երկրորդ փուլը տեղի է ունենում ՄԿԾ-ի և ՄԿԾ ուսումնական միավորի ուսումնառության արդյունքների միջև: ՄԿԾ ուսումնական միավորի մակարդակում կրթական ծրագրի յուրաքանչյուր ուսումնական միավոր հստակ ձևակերպում է ուսումնառության արդյունքներ, որոնք նույնպես բնութագրված են ՈԱԾ-ի համապատասխան մակարդակում, և նրանց հատկացվում են որոշակի կրեդիտներ, որոնք արտացոլում են ինչպես լսարանային, այնպես էլ արտալսարանային աշխատանքի ծանրաբեռնվածությունը:

Հորիզոնական կամ կառուցողական համապատասխանեցում

Հորիզոնական կամ կառուցողական[4] (Biggs, 1999) համապատասխանեցումը սահմանվում է որպես «բարձրագույն կրթության ոլորտում դասընթացի մշակման հիմնարար սկզբունք»:

[4]Կառուցողական համապատասխանեցման շրջանակը մշակել է Ջոն Բիգսը: Այն հիմնված է երկու հիմնաքարերի վրա՝ ուսանողի ուսումնառության վերաբերյալ տեսակետի («կառուցողական») և կրթական «լավ» գործընթաց ներդնելու սկզբունքի, որը ենթադրում է դասից մինչև դասընթաց, դասընթացից մինչև ծրագիր («համապատասխանեցում») ամբողջական շղթայի ներառում: Ուսանողի ուսումնառության վերաբերյալ Բիգսի տեսակետը ձևավորվել է կոնստրուկտիվիզմի ազդեցությամբ: Ենթադրվում է, որ ուսանողներն իրենց գործունեությամբ պետք է գիտելիք «կառուցեն»՝ հարստացնելով իրենց գիտելիքի արդեն առկա պաշարը: Թե որքանով օգտակար գործիք է կոնստրուկտիվիզմը դասավանդման գործընթացի տեսանկյունից, վիճելի հարց է, քանի որ կոնստրուկտիվիզմը շեշտադրում է գիտելիք «կառուցելու» համար ուսանողի անելիքը: Այնուհետև Բիգսը պնդում է, որ եթե պետք է իրապես խոր ուսումնառություն իրականացվի, ապա պետք է բավարարվեն որոշ հիմնական պայմաններ. գործունեությունը պետք է հստակ նպատակներ ունենա, ուսանողներն այդ նպատակները պետք է իմաստավորեն,, գնահատումը պետք է պատշաճ կերպով ստուգի այդ նպատակների իրականացումը, և ուսանող-դասախոս հարաբերությունները պետք է բնութագրվեն բաց երկխոսության հնարավորությամբ: Միևնույն ժամանակ, կառուցողական համապատասխանեցումը լայնորեն կիրառվում է որպես կրթության որակի բարելավման նկատմամբ ընդհանրական մոտեցում:

Սա ուսումնառության արդյունքների և գնահատման չափանիշների ներկա կիրառության, ինչպես նաև ՄԿԾ-ին ներկայացվող պահանջների հիմքում ընկած հայեցակարգ է: Սա արտացոլում է այն իրողությունը, որ ուսուցման գործընթացում անհրաժեշտ է շեշտադրել ուսումնառական գործունեությունը, եթե ուսումնառության ակնկալվող արդյունքը դեռ պետք է ձեռք բերվի, և գնահատումը՝ եթե հարկավոր է փաստել, որ ուսումնառության արդյունքն արդեն իրապես ձեռք է բերվել: Այսպիսի համապատասխանություն է հաստատվում միայն այն դեպքում, երբ ուսումնառական գործունեության և գնահատման առաջադրանքներում առկա է ուսումնառության ակնկալվող արդյունքի ձևակերպումը:

Հորիզոնական համապատասխանեցումը ենթադրում է ուսուցման ընդհանուր ռազմավարության, գնահատման քաղաքականության և պաշարների միջև համապատասխանություն՝ խթանելու համար ուսանողի ուսումնառությունը և ՄԿԾ ուսումնառության ակնկալվող արդյունքներով սահմանված գիտելիքների, հմտությունների ու կարողությունների զարգացումը: Այլ կերպ ասած՝ կառուցողական համապատասխանություն է ստեղծվում ուսումնառության արդյունքների և դասավանդման մեթոդաբանության ու գնահատման մեթոդների միջև (Բիգս և Թենգ, 2007), ինչը ուսանողներին հնարավորություն է ընձեռում ցուցադրելու իրենց կողմից ուսումնառության արդյունքների ձեռքբերումը:

Դասավանդման և ուսումնառության գործընթացների ու գնահատման միջև համապատասխանություն ապահովելու համար նպատակահարմար է հակիրճ ներկայացնել դասավանդման այն ձևերն ու մեթոդները, որոնք սովորաբար կիրառվում են բուհերում: Դասավանդման ձևերի ու մեթոդների ընտրությունը հաճախ պայմանավորված է ուսուցման եղանակով (օրինակ՝ լրիվ և/կամ ոչ լրիվ ուսումնական օրով ուսուցում, դեմառդեմ ուսուցում, հեռակա ուսուցում, հեռավար ուսուցում, առցանց ուսուցում, խառը ուսուցում, խտացված ամառային դպրոց, համագործակցային ուսուցում (գործատուների, մասնագիտական ընկերության և/կամ այլ բուհերի հետ)):

Դասավանդման ձևերին ու մեթոդներին վերաբերող մի բաժին՝ մանկավարժական բազմազան գործառությունների անավարտ ցանկով, ներկայացված է «Հավելվածներում»:

Ակնհայտ է, որ հորիզոնական համապատասխանեցման տեսանկյունից դասավանդման և ուսումնառության բոլոր պարամետրերի միջև ներդաշնակության ապահովումը մեծ նշանակություն ունի դասավանդման և ուսումնառության այնպիսի ձևերի ընտրության հարցում, որոնք կնպաստեն ուսուցման որոշակի եղանակի շրջանակում դասավանդման արդյունավետության մեծացմանը: Նշված գործընթացների և գնահատման միջև ներդաշնակության ապահովումը շատ կարևոր է որպես ուսանողի կողմից ուսումնառության արդյունքների յուրացումը փաստելու միջոց: Հետևաբար, անհրաժեշտ է ամբողջական պատկերացում ունենալ գնահատման բոլոր ձևերի վերաբերյալ՝ «ուսումնառության գնահատում, գնահատում՝ ուսումնառության համար և գնահատումը՝ որպես ուսումնառություն»: Գնահատման այս երեք տեսակները իրականացվում են ձևավորող և ամփոփիչ գնահատման միջոցով:

- *Ձևավորող գնահատում*: Սա սովորաբար ընթացիկ լսարանային գնահատում է, որն իրականացվում է դասընթացի ամբողջ ընթացքում: Ձևավորող գնահատումը հետադարձ կապ է ապահովում յուրաքանչյուր ուսանողի կատարած աշխատանքի առնչությամբ

և դասախոսին օգնում է դասավանդման գործընթացում շարունակաբար կատարելու անհրաժեշտ ճշգրտումներ: Ձևավորող գնահատումը, ներառյալ գնահատման ոչ ֆորմալ լսարանային և բենչմարքային ձևերը, դասախոսներին հնարավորություն են ընձեռում փոփոխելու իրենց դասավանդման մեթոդները, ուսանողին կրկին սովորեցնելու բովանդակային կարևոր նյութը, ինչպես նաև ուսանողների համար ստեղծելու ուսումնառության ավելի լայն հնարավորություններ՝ ապահովելով նրանց կողմից բովանդակային հիմնական/կարևոր նյութի յուրացումը:

- *Ամփոփիչ գնահատում:* Գնահատման այս տեսակն իրականացվում է ուսանողի կողմից անհրաժեշտ բովանդակության յուրացումը փաստելու համար: Քանի որ գնահատումը երբեմն կապվում է հաշվետվողականության հետ, գնահատականներ են նշանակվում՝ փաստելու ինչպես ուսանողի կատարողականը, այնպես էլ ուսումնական հաստատության կամ տվյալ շրջանային կառույցի գործունեության արդունավետությունը դասընթացի կամ կիսամյակի ավարտին: Գնահատման թե՛ ձևավորող, թե՛ ամփոփիչ ձևերը կարող են խթանել ինչպես ՄԿԾ շարունակական բարելավումը, այնպես էլ ուսանողների զբաղունակության մեծացումը ՄԿԾ-ի ու նրա բաղադրիչ ուսումնական միավորների համապատասխանեցման համատեքստում:

Գնահատման հետևողական և ներդաշնակ քաղաքականության շնորհիվ ապահովվում է ՄԿԾ կուռ ամբողջականությունը կրթական գործընթացի բոլոր մասնակիցների համար: Վերևում հիշատակված համապատասխանությունը ուսումնառության նախապես սահմանված արդյունքներին չափազանց կարևոր է գնահատման այնպիսի մոտեցումների և ռազմավարության ընտրության տեսանկյունից, որոնք ապահովում են ոչ միայն ուսումնառության արդյունքների չափելիությունը, այլ նաև արդյունքների չափման գործընթացի արդարությունը, արժանահավատությունն ու թափանցիկությունը: Հետևաբար, ՄԿԾ-ն և դասընթացի ուղեցույցները պետք է տեղեկություններ պարունակեն գնահատման քաղաքականության կամ ռազմավարության մասին՝ ուսանողներին ներկայացնելով գնահատման կարգն ու պայմանները:

Գնահատման կարգը սովորաբար ներառում և հստակեցնում է այն գործունեության կամ առաջադրանքների ուրվագիծն ու բնութագրերը, որոնք ուսանողներն իրականացնում են իրենց ուսումնառության գործընթացը խթանելու համար: Այս կարգով նախատեսվում է հետադարձ կապը՝ որպես ուսանողների ուսումնառության գործընթացի ուղղորդման միջոց, նրանով չափավորվում է գնահատմանն ուղղված գործունեությունը, մեկնաբանվում են գնահատականների նշանակման հիմքերը, սահմանվում են ավարտական աշխատանքի գնահատականի որոշման և նշանակման չափանիշները:

ՄԿԾ-ով սահմանված գնահատման ուղենիշները հավասարակշռություն են ստեղծում ձևավորող և ամփոփիչ գնահատման միջև: Գնահատումը սովորաբար հիմնվում է մոդուլի/դասընթացի/ուսումնական միավորի ընդհանուր ծանրաբեռնվածության վրա, ընդ որում գնահատման առաջադրանքների կատարման վրա ծախսված ժամանակը նույնպես հաշվարկվում է որպես ուսանողի ծանրաբեռնվածություն: Օրինակ՝ 10 կրեդիտ ունեցող ուսումնական միավորը կարող է ներառել երկու մեծ առաջադրանք և մեկ քննություն (տևողությունը՝ 2 ժամ), մինչդեռ 5 կրեդիտ ունեցող ուսումնական միավորը կարող է ներառել ընդամենը մեկ առաջադրանք և մեկ քննություն (տևողությունը՝ 1.5 ժամ): Բաշխումը կարող է տարբեր լինել՝ որոշ դեպքերում

ձևավորող գնահատման և քննությունների 50% - 50% մասնաբաժնով, այլ դեպքերում ձևավորող գնահատմանը կարող է ավելի մեծ մասնաբաժին հատկացվել, քան ամփոփիչ գնահատմանը: Հետազոտական աշխատանքով ավարտվող ուսումնական միավորներում գնահատման մասնաբաժինները որոշվում են ըստ յուրաքանչյուր առանձին դեպքի: Ինտեգրված, համատեղ գնահատումն օգտագործվում է ըստ անհրաժեշտության՝ մեկ առաջադրանքի միջոցով գնահատական ապահովելով մի շարք ուսումնական միավորների համար:

Եզրափակիչ գնահատմամբ սովորաբար ամփոփվում են մի շարք ուսումնական միավորներ/առարկաներ (ավելի շատ կրեդիտներով, օրինակ՝ 20 կրեդիտ): Ավարտական աշխատանքի գնահատումը, որպես կանոն, միտված է գնահատելու կուտակային գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, այդ պատճառով էլ իրականացվում է ուսումնառության շրջափուլի վերջում՝ բուհն ավարտելուն մոտ:

Թեև գնահատման մեթոդներն ուսումնական միավորի մակարդակում մշակվում են առանձին դասախոսների կողմից, դրանք պետք է համահունչ լինեն ընդհանուր ՄԿԾ գնահատման քաղաքականությանը և քարտեզագրվեն՝ համապատասխանեցվելով ՄԿԾ ուսումնառության արդյունքներին: Գնահատման արդարացիությունն ու արժանահավատությունը (քննական թեստեր, գրավոր (այդ թվում՝ հետազոտական) աշխատանքներ ապահովվում է հաստատության ու նրա առանձին բաժինների կանոնակարգերի դրույթների խիստ պահպանմամբ և վերահսկվում է հավասարակիցների կողմից:

Արդարացի և թափանցիկ գնահատման պահանջները բավարարելու համար գնահատման ժամանակացույցն ու չափանիշները, ինչպես նաև ցանկացած այլ խնդիր, որը կապված է գնահատման գործընթացի հետ, օրինակ՝ քննությունների ամսաթվեր և ընթացակարգեր, վերահանձնման ընթացակարգեր, հանձնման վերջնաժամկետներ, հնարավոր հետաձգման դեպքեր, ակադեմիական անազնվության հետևանքներ, գնահատման և հետադարձ կապի պայմաններ, բողոքարկումներ և այլն, նախապես ներկայացվում են ուսանողներին:

Այսպիսով, հորիզոնական կամ կառուցողական համապատասխանեցման մասին խոսելիս կարևոր է նշել, որ այն իրականացվում է մոդուլի/դասընթացի/ուսումնական միավորի ուսումնառության ակնկալվող արդյունքների մակարդակում: Շատ կարևոր է ճիշտ ընկալել ՄԿԾ ուսումնական միավորի ուսումնառության ակնկալվող արդյունքները, քանի որ դրանք են սահմանում, թե ուսանողը ինչ պետք է սովորի՝ կապ ստեղծելով դասավանդման և ուսումնառության ծրագրման ու գնահատման գործընթացների միջև: Մինչև գնահատմանն անցնելը տեղին կլինի հաշվի առնել, որ ուսումնառության ակնկալվող արդյունքներում այնպիսի բայերի առկայության դեպքում, ինչպիսիք են «մշակել», «արտացոլել», «վարկած առաջադրել», «ստեղծել / ձևավորել» և նման բայեր, կարող է կարևոր լինել դասավանդման բացատրական մեթոդների կիրառումը (օրինակ՝ դասախոսությունը՝ ուսանողին առաջադրանքը ներկայացնելու համար), սակայն միանշանակ կպահանջվեն դասավանդման և ուսումնառության այլ մեթոդներ, որոնք ուսանողին կօգնեն կատարելու առաջադրանքը: Բանալին հետևյալն է. անհրաժեշտ է ապահովել այնպիսի համատեքստ, որում ուսանողը կկատարի ճիշտ նույն գործողությունը, որը ներկայացված է ուսումնառության ակնկալվող արդյունքը սահմանող բայով՝ այդպիսով ապահովելով կապն ու շարունակականությունը ուսումնառության ակնկալվող արդյունքների և իրական ուսումնական գործընթացի միջև: Օրինակ՝ «Խնդիրներ լուծել անծանոթ բնագավառում»

առաջադրանքի պարագայում դասավանդումը, ուսումնառությունը և գնահատումը ենթադրում են խնդիրների առաջադրում այնպիսի համատեքստերում, որոնցում ուսանողներին խնդիրներ լուծել ուղղակիորեն չեն սովորեցրել: Այս առաջադրանքը, հավանաբար, անհրաժեշտություն կստեղծի օգտագործելու աջակցող դասավանդում, ուսումնառություն և գնահատում, այսինքն՝ սովորողին քաջալերել և ուղղորդել, օրինակ, ուղղակիորեն կամ համակարգչային տարբերակով նրան խնամքով ձևակերպված հուշումներ տրամադրելով: Այնուհետև ուսանողները կարող են խմբային քննարկման ժամանակ խորհրդածել յուրաքանչյուր հուշման շուրջ և ելնելով խնդրի վերաբերյալ իրենց ընդհանուր դատողություններից ու հասանելի տեղեկություններից՝ շարունակել աշխատել խնդրի լուծման ուղղությամբ: Պետք է հիշել, որ ուսանողին դեպի առաջադրանքի ինքնուրույն կատարումն ուղղորդելը ոչ միայն կրթական առումով հուսալի է (անմիջականորեն վերաբերում է ողջ կյանքի ընթացքում ուսումնառության մոտեցումներին), այլև դասախոսին ազատում է տեղեկատվության մշտական աղբյուր լինելու անհրաժեշտությունից: Դասավանդումը, ուսումնառությունը և գնահատումը կարող են լինել դասախոսի կողմից կառավարվող/կարգավորվող, հավասարակիցների կողմից կառավառվող/կարգավորվող, ինքնակառավարվող/ինքնակարգավորվող: Յուրաքանչյուրն ունի իր տեղը՝ միտված լինելով ուսումնառության ակնկալվող տարբեր արդյունքների իրականացմանը:

Հետադարձ կապով ուսանողներից ստացված արձագանքները շատ կարևոր են ինչպես ուսումնառության համար, այնպես էլ ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը չափելու և գնահատելու համար (Բիգս և Թենգ, 2007):

ԳԼՈՒԽ 2. ՄԿԾ-ՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քանի որ համապատասխանեցումը ներկայացվում է որպես ուսումնառության արդյունքների վրա հիմնված կրթական միջավայրում իրականացվող շարունակական, շրջափուլային, տվյալների և փաստերի վրա հիմնված բարեփոխում, այն պետք է իրականացվի գործողությունների որոշակի հաջորդականությամբ: Դրանք կարելի է պայմանականորեն դասակարգել որպես համապատասխանեցմանը նախորդող, բուն համապատասխանեցման և համապատասխանեցմանը հաջորդող գործողություններ:

Համապատասխանեցմանը նախորդող գործողություններ

Համապատասխանեցման գործընթացի համար սահմանված քայլերին անցնելուց առաջ անհրաժեշտ է նախ համապատասխանեցմանը նախորդող գործողություններ իրականացնել:

1. Ձևավորել աշխատանքային խմբեր, համապատասխանեցման համար մշակել գործունեության ծրագիր և ժամանակացույց

Ուսումնառության արդյունքների մշակման համար պատասխանատու աշխատանքային խմբում պետք է ընդգրկվեն բարձր որակավորմամբ աշխատակիցներ և ոլորտի մասնագետներ (պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերից): Անդամներից մեկը կարող է նշանակվել խմբի ղեկավար և համակարգել գործընթացի արդյունավետ իրականացումը: Աշխատանքային խումբը պետք է մշակի գործողությունների մանրամասն ծրագիր, որը պետք է ուսումնական հաստատության կողմից: Աշխատանքային խմբի ձևավորման մասին պաշտոնական որոշումը պետք է ընդունվի համապատասխան ղեկավար մարմինների և անհրաժեշտ ռեսուրսների ներգրավմամբ: Համապատասխանեցման աշխատանքային խմբի ընտրությունը ողջ գործընթացի և ՄԿԾ իրականացման սկզբնակետն է: Համապատասխանեցման աշխատանքային խմբում պետք է ընդգրկվեն տվյալ ՄԿԾ-ի հետ առնչություն ունեցող դասախոսներ: Քանի որ ՄԿԾ մշակման կամ բարելավման որոշումը, ինչպես նաև ողջ գործընթացի շրջանակն ու ծավալը սահմանվում են աշխատանքային ավելի մեծ խմբի կողմից, բուն համապատասխանեցման աշխատանքային խմբում առաջին հերթին ներգրավվում են բովանդակային բաղադրիչի մասնագետներ ՄԿԾ յուրաքանչյուր ուսումնական միավորի համար: Համապատասխանեցման աշխատանքային խմբի անդամներն իրենց աշխատանքը կատարում են խմբով և անհատապես՝ կախված աշխատանքի բնույթից: Ամենակարևորը գործունեության այնպիսի ծրագրի մշակումն է, որը խմբի անդամներին հնարավորություն է ընձեռում իրենց աշխատանքը կատարելու առավելագույն արդյունավետությամբ: Ընդլայնված աշխատանքային խմբի անդամները, այդ թվում ուսպլան մշակող մասնագետները, գործատուները և արդյունաբերության տվյալ ոլորտի ներկայացուցիչները կարող են աջակցել աշխատանքային խմբին ՄԿԾ-ների, ինչպես նաև դրանց մաս կազմող դասընթացների բովանդակության համապատասխանեցման գործընթացում: Ուսումնառության ակնկալվող արդյունքների շուրջ քննարկումները կնպաստեն աշխատանքային խմբի աշխատանքներին ուսումնական ծրագրի համապատասխանեցման գործընթացում: Խմբի

յուրաքանչյուր անդամի դերի սահմանումը (անկախ նրանից՝ խմբի անդամը պատասխանատու է հորիզոնական թե ուղղահայաց համապատասխանեցման համար) հստակ պատկերացում է տալիս, թե խումբն ինչպիսի անհատների կարիք ունի:

2. Ձևավորել արդյունաբերության կոնկրետ ճյուղի շահակիցների մասնակցությամբ համակողմանի գործընկերություն քլաստերային ձևաչափով

Այս աշխատանքային խումբը, որը ներառում է կրթության, աշխատաշուկայի, արդյունաբերության ոլորտի առաջատարների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, սահմանում է այն հիմնական մարտահրավերներն ու խնդիրները, որոնք առկա են արդյունաբերության կոնկրետ ոլորտում և դրան առնչվող ծրագրերում: Վերջիններում առկա հիմնական խնդիրը վեր հանելուց հետո ողջ աշխատանքային խումբը և նրա յուրաքանչյուր անդամ ձեռնամուխ են լինում այդ խնդրի լուծմանը՝ տրամադրելով ժամանակ և անհրաժեշտ ռեսուրսներ, որպեսզի կատարվող բարեփոխումները նպաստեն ուսանողների կատարողականի և առաջադիմության բարձրացմանը: Եթե կրթական ծրագրի կարիքները չեն կարող բավարարվել առկա ուսումնական ծրագրով, աշխատանքային խումբը կարող է հանդես գալ աշխատաշուկայի պահանջները բավարարող նոր ՄԿԾ մշակելու առաջարկությամբ: ՄԿԾ ուսումնառության ակնկալվող արդյունքները սահմանվում են աշխատանքային խմբի կողմից:

3. Գտնել, ընտրել և վերլուծել ուսանողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ տվյալները: Այս քայլով կատարվում է տվյալ ՄԿԾ շրջանակներում ուսանողների առաջադիմության, ինչպես նաև աշխատաշուկայում այդ ծրագրի շրջանավարտների գործունեության վերաբերյալ տվյալների հավաքագրում: Այս գործընթացում բացահայտվում են ուսանողների առաջադիմության և կատարողականի մեջ եղած բացթողումները: Այնուհետև աշխատանքային խումբը վերլուծում և մեկնաբանում է ուսանողների ունեցած արդյունքները՝ ուշադրությունը կենտրոնացնելու համար այն խնդրի/խնդիրների վրա, որոնք վեր էին հանվել բարելավմանն ուղղված գործողությունների առաջին փուլում:

4. Կատարել տվյալ որակավորմանը/ՄԿԾ-ին (պլանավորման թե վերանայման փուլում) առնչվող ազգային և միջազգային փորձի բենչմարքինգ: ՄԿԾ ուսումնառության արդյունքների մշակման/վերանայման գործընթացում առաջնային են լավագույն փորձի ուսումնասիրությունն ու վերլուծությունը: Այս փուլում իրականացվում է բենչմարքինգ՝ համակարգված գործընթաց, որը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու տարբեր հաստատություններում առկա լավագույն փորձը և փոխառելու որոշ ընթացակարգեր ու մոտեցումներ՝ հաստատության ուսումնական գործընթացները նրա առաքելությանը համահունչ բարելավելու նպատակով: Բենչմարքինգի փուլերն ու ձևաչափը ներկայացված են համապատասխան հավելվածում:

5. Մշակել/վերանայել ՄԿԾ առաքելությունը, նպատակներն ու խնդիրները: ՄԿԾ առաքելությունը, նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև ուսումնառության արդյունքները պետք է հիմք լինեն շահառուների համար և խթանեն մատուցվող դասընթացների

համապատասխանեցումը ՈԱԾ-ին:

6. **Մշակել/վերանայել ՄԿԾ ուսումնառության արդյունքները:** ՄԿԾ ուսումնառության արդյունքների ձևակերպումն սկսվում է հետևյալ կերպ. «Ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո շրջանավարտը պետք է կարողանա»: Սրան հաջորդում են այն ակտիվ բայերը, որոնցով արտահայտվում են հաղորդված գիտելիքները, հմտություններն ու կարողությունները: Ուսումնառության արդյունքների մշակման/վերանայման գործընթացում կարող են օգտակար լինել համապատասխան ձևանմուշներն ու աղյուսակները, որոնցում բայերը դասակարգվում են ըստ շնորհվող որակավորման մակարդակների, մասնագիտացումների կամ ենթամասնագիտացումների: Յուրաքանչյուր խմբում ուսումնառության առնվազն երկու արդյունքի նախատեսումը երաշխավորում է մակարդակի սպեկտրի համեմատաբար ամբողջական ընդգրկում: ՄԿԾ ուսումնառության արդյունքը ներկայացնելու համար հաճախ կարող է մեկից ավելի նախադասություն պահանջվել, քանի որ ուսումնառության արդյունքները բավականին լայն ընդգրկում ունեն :[5]

Համապատասխանեցման փուլի գործողություններ

ՄԿԾ-ների համապատասխանեցման բուն գործողությունները պետք է ուղղորդվեն և կառուցվեն ըստ վերևում ներկայացված ու նկարագրված կողմնորոշիչների: Մասնավորապես, օգտակար կլինի սկսել ՈԱԾ-ի բնութագրիչների և ՄԿԾ ուսումնառության արդյունքների համապատասխանեցումից՝ համոզվելու համար, որ ուսումնառության արդյունքները ներառում են համապատասխան մակարդակի համար ՈԱԾ-ի բնութագրիչներով սահմանված գիտելիքներ, հմտություններ և կարողություններ: Սա հնարավոր է իրագործել միայն մանրակրկիտ ուսումնասիրությունից և վերլուծությունից (որոնք առաջարկվում են համապատասխանեցմանը նախորդող փուլում) և շահառուների հետ խորհրդատվություններին, տվյալների հավաքագրմանը, ազգային ու միջազգային բենչմարքինգին և առկա իրավիճակի վերլուծությանը հաջորդող ու հստակ մշակված չափանիշների վրա հիմնված ՄԿԾ ինքնագնահատումից հետո:

Ուսումնական ծրագրի (որը նախընտրաբար պետք է բենչմարքինգի ենթարկվի միջազգային նմանատիպ ծրագրերի հետ) մշակման ընթացքում ընդունվող որոշումները հիմնվում են Բոլոնիայի հռչակագրի, Որակավորումների եվրոպական շրջանակի, հայաստանյան օրենսդրության ու ՈԱԾ-ի, ինչպես նաև բոլոր շահառուների, այդ թվում՝ աշխատաշուկայի ներկայացուցիչների ակնկալիքների վրա և պայմանավորվում դրանցով: Վերոնշյալ բոլոր դրույթների և հարաչափերի (պարամետրերի) համադրումն ապահովում է այն պահանջների հիմնավորված ըմբռնում, որոնց բավարարումն ավելի դյուրին կդարձնի և կխթանի ակադեմիական շարժունությունը կրթության բարձր որակի և համապատասխանեցված սկզբունքների շնորհիվ: ՄԿԾ-ի՝ կարողությունների վրա հիմված ուսումնառության ակնկալվող

[5] Ուսումնառության արդյունքները ձևակերպելու/փաստաթղթավորելու և դրանք ուսանողներին արդյունավետ կերպով հասանելի դարձնելու համար խորհուրդ է տրվում մշակել և շրջանառության մեջ դնել ծրագրի ձեռնարկ, որը կարող է ներառել ծրագրային պահանջները, ՄԿԾ-ի և ՄԿԾ միավորի ուսումնառության արդյունքները, դրանցից բխող դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանությունը, յուրաքանչյուր ծրագրի շրջանակում շնորհվող կրեդիտները՝ ըստ տվյալ որակավորման համար համաձայնեցված կրեդիտների բաշխման, որակավորման տեսակի, անվանման, կրեդիտի հասանելիության, փոխանցման ու բարելավման, ինչպես որ հստակ նկարագրված է ՄԿԾ-ում և հարակից այլ փաստաթղթերում:

արդյունքները պետք է ներառեն ՈԱԾ-ի նկարագրիչներում արտացոլված կարողությունները, մասնագիտական գործունեություն ծավալելու համար պահանջվող կարողությունները (այն է՝ գործատուների պահանջներն ու ակնկալիքները), ինչպես նաև այն կարողությունները, որոնք ընտրվել / առանձնացվել են ուսանողների կողմից՝ միջազգային համանման այլ ծրագրերի հետ խորքային բենչմարքինգի արդյունքում:

Այսպիսով, ՄԿԾ-ն համապատասխանեցված է, եթե՝

- ՄԿԾ ուսումնառության արդյունքները համապատասխանում են շնորհվող որակավորման (ըստ տեսակի և մակարդակի) ՝ ՈԱԾ-ի նկարագրիչներին:
- ՄԿԾ ուսումնական միավորի ուսումնառության արդյունքներն ապահովում են ՄԿԾ ուսումնառության արդյունքների ձեռքբերումը:
- Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներն արտացոլում են ՄԿԾ-ի և ՄԿԾ ուսումնական միավորի ուսումնառության արդյունքները,
- Յուրաքանչյուր ծրագրի հատկացվող կրեդիտները համապատասխանում են տվյալ որակավորման համար սահմանված կրեդիտների բաշխմանն ըստ ուսումնական միավորների:

Ստորև ներկայացված են այն քայլերը, որոնք անհրաժեշտ է իրականացնել ՄԿԾ-ների համապատասխանեցման գործընթացում.

7. Որոշել, թե ՄԿԾ ուսումնառության արդյունքներում ինչ չափով են ներառված ՈԱԾ-ի՝ այդ մակարդակի համար սահմանված նկարագրիչների մանրամասները՝ ըստ «Գիտելիք»-ի համար ՈԱԾ-ում առաջարկված խմբերի և ենթախմբերի: Այս մոտեցման կիրառումը նպաստում է տվյալ որակավորման համար ՈԱԾ-ով սահմանված նկարագրիչների և առաջարկվող ՄԿԾ-ով սահմանված ուսումնառության ակնկալվող արդյունքների միջև եղած բացը հայտնաբերելուն:

8. Որոշել, թե ինչ չափով են ՈԱԾ-ի՝ ավելի բարձր մակարդակի նկարագրիչներն արտացոլված ՄԿԾ ուսումնառության արդյունքների մեջ: Սա հնարավոր է իրականացնել ՈԱԾ-ի նկարագրիչների հետևողական/խորքային վերլուծության միջոցով՝ առանձնացնելու համար այն հիմնական բառերը, որոնք բնութագրում են գիտելիքի, հմտության և կարողության տեսակը, խորությունը, բարդությունը, վերաբերելիությունը, համատեքստը և այլ առանձնահատկություններ: Քանի որ ՄԿԾ ուսումնառության արդյունքների համընդհանուր նկարագրիչները սահմանում են, թե շրջանավարտներն ինչ պետք է կարողանան անել իրենց ուսումնառության արդյունքում, դրանք չեն վերաբերում գիտելիքի (այդ թվում նաև հմտությունների ու կարողությունների) կոնկրետ բովանդակությանը: Ուստի անհրաժեշտ է մշակել այնպիսի մի մատրից, որը վեր կհանի ՈԱԾ-ի նկարագրիչների, ՄԿԾ ուսումնառության արդյունքների և գիտելիքի բովանդակության (ՄԿԾ բովանդակության) միջև առկա կապը՝ համապատասխանությունը ապացուցելու և ապահովելու նպատակով:

9. Կապակցել ՄԿԾ ուսումնական միավորի ուսումնառության արդյունքները ՄԿԾ ուսումնառության արդյունքների հետ: Սա բացահայտում է երկու տարբեր մակարդակներում սահմանված ուսումնառության ակնկալվող արդյունքների միջև եղած

կապը: Ինչպես նկարագրիչների և ուսումնառության արդյունքների իմաստային վերլուծության պարագայում, այնպես էլ այս դեպքում գիտելիքներն ու կարողություններն արտացոլող բայերը թույլ են տալիս գտնել և ուսումնասիրել ուսումնառության արդյունքների մեջև եղած կապը և ժառանգականությունը վայրընթաց ստորակարգության մեջ, որը հակառակ հաջորդականության դեպքում կհանգեցնի ՄԿԾ մակարդակում ուսումնառության ընդհանրական արդյունքների ձևավորմանը այն ուսումնական միավորների միջոցով, որոնք միտված են սահմանված գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը: ՄԿԾ ուսումնառության արդյունքների և ՈԱԾ-ի նկարագրիչների, ծրագրի հիմքում դրված բովանդակության և ՄԿԾ ուսումնական միավորի ուսումնառության արդյունքների փոխկապակցումը կհանգեցնի հաջորդ տրամաբանական քայլին՝ համապատասխանեցման գործընթացի գնահատմանը:

10. Գնահատել համապատասխանեցման գործընթացը բացթողումներն ու ավելորդ կրկնությունները վեր հանելու նպատակով: Որակավորումների և վարքագծային/ուսումնառական խնդիրների վերանայումը (այսինքն՝ այդ խնդիրների ուղղվածության բացահայտումը, բացթողումների և դրանց ուսումնասիրության ու վերացման մարտավարությունների վերհանումը) իրականացվում է այս փուլում: Այս գործընթացն ապահովում է բովանդակության արդիականությունն ու սովորողների համար իմաստալից հաջորդականությունը և հնարավոր է դարձնում ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը: Բացթողումներ գտնելու դեպքում համապատասխանեցնող աշխատանքային խումբը պետք է ուսումնական նոր միավորներ ներդնի կամ վերանայի առկա ուսումնական միավորներն ու դրանց բովանդակությունը՝ միաժամանակ կրեդիտների վերահաշվարկ կամ վերաբաշխում իրականացնելով:

11. Վերանայել ուսումնական ծրագիրն այն տեսանկյունից, որ նրանում արտացոլվեն դասընթացների ցանկալի հաջորդականությունը, կրեդիտները և ուսանողների ուսումնառական փորձառությունը, որոնք պետք է հասանելի լինեն ՄԿԾ- յուրաքանչյուր մակարդակում: Նոր ուսումնական ծրագրում արտացոլվում են այն վարքագծային/ուսումնառական նպատակները, որոնք վեր էին հանվել՝ ՄԿԾ-ում ներառվելու համար, սակայն դեռևս ընդգրկված չեն ՄԿԾ բաղկացուցիչ ուսումնական միավորներում: Այս դեպքում որոշվում է՝ արդյոք ծրագրում անհրաժեշտ է ավելացնել նոր ուսումնական միավորներ, թե կարելի է վերափոխել առկա ուսումնական միավորները՝ նոր գիտելիքները, հմտություններն ու կարողությունները ձևավորելու համար: Ամբողջովին նոր ծրագրի դեպքում որակավորումներն ու վարքագծային/ուսումնառական խնդիրները համապատասխանեցվում են բոլոր ուսումնական միավորների հետ, իսկ ուսանողների ուսումնառական փորձառությունն ընդգրկվում է որպես դասընթացի բաղկացուցիչ:

12. Սկսել ուսումնական ծրագրի քարտեզագրումը: Ուսումնական ծրագրի քարտեզագրման միջոցով յուրաքանչյուր դասավանդող մշակում է սահմանված չափորոշիչներին և նպատակներին համապատասխանող դասավանդման միավորների շրջանակ՝ ստեղծելով մի

ուրվագիր, որը կարելի է զարգացնել և քննարկել ինչպես նույն կամ նման, այնպես էլ տարբեր առարկաներ դասավանդողների հետ միջառարկայական կապերի հաստատման նպատակով : [6]

13. Համապատասխանեցնել բազային գիտելիքներն ու հմտությունները (ՄԿԾ ուսումնական միավորի պահանջներին, գնահատմանը, ինչպես նաև յուրաքանչյուր դասընթացի ավարտին շնորհվելիք վկայականներին ու հավաստագրերին) և սահմանել, մշակել և/կամ հարմարեցնել (ադապտացնել) այնպիսի գնահատում, որը հիմնավոր և արժանահավատ արդյունքներ կապահովի բոլոր ուսանողների համար: Այս քայլով ենթադրվում է կրթական ծրագիրը դիտարկել ուսումնառության ավելի ուշ փուլերում ձեռք բերված գիտելիքի և ՄԿԾ ավարտին ձեռք բերվելիք որակավորումների/ հավաստագրերի տեսանկյունից. այս գործընթացը կոչվում է «հետահայաց քարտեզագրում» (back-mapping): Այս մոտեցումը պատկերացում է ձևավորում յուրաքանչյուր ուսումնական միավորի ու մակարդակի համար անհրաժեշտ բազային այն գիտելիքի և հմտությունների, ինչպես նաև դասավանդման ծավալի ու ինտենսիվության մասին, որոնք անհրաժեշտ են սահմանված արդյունքների ձեռքբերման համար: Բացի այդ, հետահայաց քարտեզագրումը բացահայտում է այն առանցքային հասկացություններն ու հիմնարար թեմաները, որոնք անցնում են ամբողջ ծրագրի միջով, իսկ դա մեծապես անհրաժեշտ է ապագա մասնագիտական կոնկրետ գործունեությանը միտված դասընթաց ձևավորելու կամ բարելավելու համար:

14. Մշակել ՄԿԾ ուսումնական միավորի նկարագիրը և սահմանել դասավանդման ռազմավարությունը՝ շեշտադրելով համատեքստայնացված, ինչպես նաև աշխատանքի[7] և հիմնախնդրի վրա հիմնված ուսուցման հնարավորությունները, երբ բոլոր բացթողումներն արդեն վեր են հանվել և շտկվել հետևանքները մեղմացնող որոշումների կայացման փուլում: Այստեղ է սկսվում հորիզոնական համապատասխանեցումը: Այս քայլի ընթացքում սահմանվում է, թե ինչպես պետք է դասավանդվեն գիտելիքները, հմտությունները և վարքագծային/ ուսումնառական խնդիրները: Ուշադրություն է դարձվում բովանդակության յուրացման ցանկալի մակարդակին, ինչպես նաև ուսանողների ուսումնառության ոճերի զանազանությանը: Միևնույն բովանդակության նկատմամբ բազմաթիվ մոտեցումների ապահովումը շատ կարևոր է, հատկապես երբ առնչվում ենք այն մակարդակին և/կամ ուսումնական միավորին, որում պետք է յուրացվի որոշակի բովանդակություն:

15. Կառուցողաբար համապատասխանեցնել ուսումնառության արդյունքները մանկավարժական մեթոդաբանության և գնահատման մեթոդների հետ (Բիգս և Թենգ, 2007): Ուսումնառության արդյունքները համապատասխանեցնելիս կարող է օգտակար լինել

[6]Այլ առավելություններից բացի, ուսումնական ծրագրի քարտեզագրումը կարող է օգտակար լինել՝ ա) դասավանդման յուրաքանչյուր միավորին հատկացվող ժամաքանակի սահմանման, բ) դասախոսակենտրոն և ուսանողակենտրոն ուսուցման համամասնության և դրանց կիրառման ժամանակի որոշման, գ) գնահատման տեսակների ընտրության և դ) ռեսուրսների բաշխման հարցերում:

[7] Աշխատանքի վրա հիմնված (աշխատանքահեն) ուսուցումը ծրագրերի կարևոր բաղադրիչ է: Դասավանդման ռազմավարությունն այն բանալին է, որը միտված է ուսանողներին հաջողության նախապատրաստելու: Աշխատանքահեն ուսուցման բոլոր ձևերը ենթադրում են համագործակցություն արդյունաբերության կամ գործունեության տվյալ ոլորտի համապատասխան մասնագետների հետ և սերտորեն կապված են այդ համագործակցությունից (հրավիրված մասնագետների՝ լսարանում կարդացած դասախոսություններ, մասնագիտական գործուղումներ, խտացված պրակտիկաներ համապատասխան աշխատավայրերում, ավարտական պրակտիկա) ուսանողների ձեռք բերած արդյունքների հետ:

հետևյալ մոտեցումը.

- սահմանել ուսումնառության ակնկալվող արդյունքները,
- ընտրել ուսումնառական այնպիսի գործունեություն, որը կհեշտացնի ուսումնառության արդյունքների ձեռքբերումը,
- սահմանել գնահատման համապատասխան ձևեր, որոնց միջոցով ուսանողները կկարողանան ցուցադրել ուսումնառության արդյունքների ձեռքբերումը,
- քննել, թե ինչպես են ՄԿԾ ուսումնական միավորի ուսումնառության արդյունքները կապված ՄԿԾ-ի և այլ ուսումնական միավորների ուսումնառության արդյունքների հետ՝ խորհրդակցելով ծրագիրն իրականացնող խմբի հետ,
- վերանայել և թարմացնել ուսումնառության արդյունքները, դասավանդման և ուսումնառության գործընթացներում իրականացվող գործունեությունը և գնահատումը:

16. **Որոշել գնահատման ձևերը**, որոնք անհրաժեշտ են՝ չափելու ուսանողի առաջադիմությունը, ինչպես նաև ՄԿԾ համապատասխանեցումից բխող անհրաժեշտ բարեփոխումները: Սա է ՄԿԾ շարունակական բարելավման բանալին: Օգտակար կարող է լինել քայլերի հետևյալ հաջորդականությունը.

- Հավաքել ուսանողների գնահատականների մասին համակողմանի տեղեկատվություն ողջ հաստատության մակարդակով (բենչմարք և ամփոփիչ գնահատում)՝ հստակեցնելով, թե երբ են դրվում այդ գնահատականները: Այս միջոցով որոշվում է, թե որ գիտելիքները, հմտությունները, կարողությունները և չափորոշիչներն են ենթակա չափման, նաև սահմանվում է, թե ինչպես կարելի է ներկայացնել ՄԿԾ հաջող իրականացումը:
- Վերանայել գնահատման առկա ձևերը՝ քննության և ծրագրի բովանդակության, ինչպես նաև ՄԿԾ-ին առնչվող մասնագիտական չափորոշիչների միջև ներդաշնակություն ապահովելու համար:
- Սահմանել և թարմացնել գնահատման ձևերը ուսումնական ծրագրի և գնահատման գործիքների միջև առկա բացերը վերացնելու նպատակով:

17. Սահմանել, թե ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ առկա ուսումնական ծրագրերի վերանայման և նոր ծրագրերի մշակման, ինչպես նաև դասավանդման ռեսուրսների հասանելիության ապահովման համար, և անհրաժեշտության դեպքում մշակել գրավոր համաձայնագրեր: Բովանդակության մեջ առկա բացթողումներն ու հավելուրդը դասընթացի և ծրագրի մակարդակում վեր հանելուց և ուսումնական ծրագրի ու դասավանդման ռազմավարության մեջ վերացնելուց հետո կարող են քննարկվել կրեդիտների շնորհման այլընտրանքային տարբերակները (կրկնակի կրեդիտ, հստակ սահմանված կրեդիտ, քննության հիման վրա տրվող կրեդիտ) և մշակել համաձայնագրեր: Կրեդիտների շնորհման այլընտրանքային տարբերակների ներդրմանը զուգահեռ կարող են կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակում անցկացվել քննարկումներ հետևյալ հարցերի շուրջ՝ նյութատեխնիկական բազայի համատեղ օգտագործում, դասավանդողների համատեղությամբ աշխատանք, աշխատանքի վրա հիմնված ուսումնառության գործընթացի կազմակերպում, մասնագիտական զարգացման ապահովում, գործատուների հետ խորհրդատվությունների կազմակերպում, ինչպես նաև

լրացուցիչ ֆինանսավորման և այլ ռեսուրսների որոնում, որոնք անհրաժեշտ են նոր ՄԿԾ-ների իրականացման համար: Այս փուլում սահմանվում է, թե որ ֆակուլտետը, հաստատությունը կամ գործընկեր կազմակերպությունն է պատասխանատու այն դասընթացների իրականացման համար, որոնց շուրջ համաձայնություն է ձեռք բերվել:

18. Սահմանել և մշակել ուսանողների աջակցման ծառայություններ և առաջարկել անհատականացված ռազմավարություն՝ օժանդակելու աջակցության և ուղղորդման ավելի մեծ կարիք ունեցող ուսանողներին: Մշակել այնպիսի ռազմավարություն, որով աջակցություն կցուցաբերվի տարբեր և, հնարավոր է, բոլոր առարկայական ոլորտներում աջակցության կարիք ունեցող ուսանողներին: Այս փուլում պետք է սահմանել աջակցման ռազմավարություն հաստատության մասշտաբով, ինչպես նաև ՄԿԾ-ների վրա հիմնված ռազմավարություն՝ մեծացնելու համար բոլոր ուսանողների՝ անհրաժեշտ վերլուծական գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման ներուժը: Եվ դարձյալ, այս համատեքստում շատ կարևոր է ուշադրությունը ուսումնառության անհատական ձևերի և ուսանողների կարիքների վրա կենտրոնացնելը:

Համապատասխանեցմանը հաջորդող փուլի գործողություններ

Համապատասխանեցման յուրաքանչյուր գործընթաց գնահատվում է որպես շարունակական բարելավման մաս: Այս փուլում սահմանվում են գնահատման մոտեցումները՝ բարելավման ռազմավարության, տվյալ դեպքում՝ նոր և բարելավված համապատասխանեցման գործընթացի արդյունավետությունը որոշելու նպատակով: Ուսանողների առաջադիմության մասին տվյալները, որոնք ստացվում են ամփոփիչ գնահատման արդյունքում, համապատասխանեցման աշխատանքային խմբի կողմից հավաքագրվում, վերլուծվում և ներկայացվում են ընդլայնված աշխատանքային խմբի անդամներին՝ որպես աջակցություն ՄԿԾ նոր մարտահրավերներն ու առկա հնարավորությունները վեր հանելու հարցում:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ

Քանի որ համապատասխանեցման նպատակը հաստատության որակի ապահովումն է, ակնհայտ է, որ այն պետք է ստուգել որպես որակի ապահովման գործընթացի մաս: Այս առումով ինքնագնահատումն այն գործընթացն է, որի նպատակն է իրականացնել համակարգված և քննադատական ինքնավերլուծություն, որից կբխեն համապատասխան դատողություններ և/կամ առաջարկություններ ՄԿԾ որակի վերաբերյալ:

Այս գլուխը վերաբերում է ՄԿԾ գնահատմանը: Որպես որակի բարելավմանը միտված հավաքական գործիք՝ այս գործընթացը կավարտվի զեկույցով, որը տեղեկատվություն կապահովի նաև արտաքին փորձագիտական խմբի համար՝ հնարավորություն ընձեռելով կատարելու անկախ արտաքին գնահատում (արտաքին փորձագետների վերապատրաստման նյութը ներկայացված է «Հավելվածներ» բաժնում): ՄԿԾ ինքնագնահատումը, որպես կանոն, կատարվում է ծրագիրն իրականացնողների կողմից որակի կառավարման պատասխանատուների աջակցությամբ: Այն որակի ներքին ապահովման առաջնային և հիմնական գործիք է:

Որպես փաստերի վրա հիմնված գործընթաց՝ ինքնագնահատումը ենթադրում է ՄԿԾ արդյունավետության արտացոլում՝ զուգակցված պարբերաբար հավաքագրվող վարչական տվյալների, ուսանողների և շրջանավարտների կողմից ՄԿԾ գնահատման արդյունքների վերլուծությանը: Փաստերի հավաքագրումն իրականացվում է մշակված հարցաթերթիկների կամ ֆոկուս-խմբային քննարկումների, դասախոսների և ուսանողների հետ թիրախային հարցազրույցների միջոցով: **Սա հավաքագրված տեղեկությունների կառուցողական վերլուծություն է (ոչ նկարագրություն կամ վերաձևակերպում)՝ հիմնված ՄԿԾ հաստատման (ուսումնառության արդյունքների համապատասխանեցման) համար անհրաժեշտ հստակ չափանիշների վրա:** Այս գործընթացն ավարտվում է երկու փաստաթղթի ստեղծմամբ՝

- գրավոր զեկույց՝ համապատասխան փաստերով և բարելավման առաջարկություններով, որի հիման վրա դատողություններ են արվում ՄԿԾ առկա վիճակի և համապատասխանության ապահովման աստիճանի մասին,
- ՄԿԾ ձեռնարկ/ ՄԿԾ փաստաթուղթ, որով փաստեր են տրամադրում համապատասխանեցման վերաբերյալ:

Համապատասխանության ստուգմանն ուղղված քայլեր

ՄԿԾ համապատասխանությունը ստուգելու համար առաջարկվող չափորոշիչները հիմնականում կապվում են բուհի ներքին բարելավման, հատկապես, ՄԿԾ մշակման և ինքնավերլուծության միջոցով իրականացվող ներքին գնահատման գործընթացներին: Այս առումով համապատասխանությունը կարող է ստուգվել երկու հիմնական ընդգրկուն չափանիշների տեսանկյունից:

1. Համապատասխանություն ՄԿԾ ուսումնառության ակնկալվող արդյունքների և
   - համապատասխան առարկայի կամ մասնագիտական ոլորտի չափորոշիչների,

- որակավորումների ազգային շրջանակի,
- ընդունելության հստակ սահմանված նախապայմանների միջև:

2. Դասավանդում, ուսումնառություն և գնահատում՝
   - պատշաճ ակադեմիական միջավայրում,
   - դասավանդման և ուսումնառության համապատասխան ձևերով,
   - գնահատման համապատասխան քաղաքականությամբ և գործընթացներով,
   - պատշաճ ծանրաբեռնվածության պայմաններում,
   - աշխատակազմի ներգրավմամբ և աջակցությամբ,
   - ռեսուրսներով հագեցվածության պայմաններում:

ՄԿԾ ինքնագնահատման չափանիշները բավարարելու համար կարևոր է հաշվի առնել չափանիշների սահմանման հիմքում ընկած բազմաթիվ հասկացություններ և մանրամասներ: Ստորև ներկայացված է հնարավոր այն հարցերի ցանկը (այդ թվում և նրանց, որ կարող են հնչեցվել արտաքին փորձագիտական խմբի կողմից), որոնք ուղղված են համապատասխանության գնահատմանը որակի ներքին ապահովման շրջանակում: Ինքնագնահատման ժամանակ անհրաժեշտ է քննադատաբար պատասխանել այդ հարցերին:

Պատասխանեք հարցերին և ստորև բերված չափանիշներին համապատասխանության փաստեր տրամադրեք, ինչպես նկարագրված է «Ինքնավերլուծության հարցեր» բաժնում.

1.1 ՄԿԾ ուսումնառության ակնկալվող արդյունքներն արդյոք համապատասխանո՞ւմ են ցանկացած կիրառելի ազգային և միջազգային առարկայական/մասնագիտական ոլորտի չափորոշիչներին և ՈԱԾ-ին:

1.2 ՄԿԾ ուսումնառության ակնկալվող արդյունքները արդյոք բավարարո՞ւմ են ցանկացած կիրառելի ազգային և միջազգային առարկայական/մասնագիտական ոլորտի պահանջները:

1.3 ՄԿԾ ուսումնառության ակնկալվող արդյունքներն արդյոք համապատասխանո՞ւմ են ՈԱԾ-ի բակալավրի/ մագիստրոսի աստիճանների նկարագրերին:

1.4 ՄԿԾ ընդունելության պահանջներն արդյոք հստակ են և համապատասխանո՞ւմ են ազգային նորմերին:

1.5 Հնարավո՞ր է արդյոք հստակ ցուցադրել, որ ՄԿԾ-ի համար բազային կրթությամբ ապահովվում են այն գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, որոնք սահմանված են Շրջանակի ավելի ցածր մակարդակներում:

1.6 Ուսումնառության ակնկալվող արդյունքներն արդյոք համահո՞ւնչ են ազգային օրենսդրությանն ու միջազգային կառույցների առաջարկություններին:

1.7 ՄԿԾ-ի և ՄԿԾ առանձին ուսումնական միավորի ուսումնառության արդյունքներն արդյոք այնպե՞ս են ձևակերպված, որ արտացոլեն, թե ուսանողն ինչ պետք է իմանա և կարողանա անել ՄԿԾ-ի/ կամ դրա ուսումնական միավորի ավարտին:

1.8 Ուսումնառության ակնկալվող արդյունքներն արդյոք համապատասխանո՞ւմ են տվյալ մասնագիտության ոլորտում (աշխատաշուկայում) ՄԿԾ շրջանավարտին առաջադրվող պահանջներին:

1.9 Ուսումնառության արդյունքներն արդյոք բավարարո՞ւմ են կոնկրետ ոլորտի սկսնակ մասնագետի կարիքները:

2.1 Արդյոք պատշաճ ուշադրություն դարձվե՞լ է ուսումնական ծրագրի և ՄԿԾ մշակման գործընթացին ու բովանդակությանը:

2.2 ՄԿԾ ուսումնառության արդյունքներն արդյոք հիմնվա՞ծ են ՄԿԾ ուսումնական միավորի ուսումանռության արդյունքների վրա:

2.3 ՄԿԾ-ն արդյոք այնպե¬՞ս է մշակված, որ նրա ուսումնառության արդյունքները հստակ արտացոլվեն կոնկրետ մոդուլներում կամ ՄԿԾ համապատասխան ուսումնական միավորներում:

2.4 ՄԿԾ բովանդակությունը և ուսումնական միջավայրը արդյոք բավարա՞ր են ծրագրով սահմանված ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերման համար: Մասնավորապես՝

(ա) Արդյո՞ք ՄԿԾ-ն իրականացնում են կոմպետենտ և իրենց առարկայական ոլորտում հարուստ փորձառությամբ աշխատակիցներ (գնահատողներ, դասախոսներ և այլն), որոնք կարող են ուսանողներին հնարավորություն ընձեռել ձեռք բերելու ՄԿԾ ուսումնառության ակնկալվող արդյունքները և գնահատել նրանց կրթական նվաճումները:

(բ) ՄԿԾ իրականացման գործընթացում ակադեմիական և վարչական աջակցություն ցուցաբերող աշխատակիցներն արդյոք ծանո՞թ են ազգային չափորոշիչներին:

(գ) Ինչպիսի՞ վերապատրաստումներ են իրականացվել նշված աշխատակիցների համար:

(դ) Որո՞նք ենաշխատակիցների հստակ դերն ու պարտականությունները:

(ե) Նշանակված մասնագետներն արդյոք կոմպետե՞նտ են իրենց դերն իրականացնելու համար:

(զ) ՄԿԾ-ի և բաղադրիչ ուսումնական միավորների իրականացման համար արդյոք ապահովվա՞ծ են՝

- համապատասխան կրթական միջավայր (ֆիզիկական, սոցիալական, մտավոր, և արդյոք բուհում ընդունո՞ւմ են, որ միջավայրը կարող է վիրտուալ լինել)
- և ռեսուրսներ, ինչպես օրինակ՝ գրադարաններ և առցանց տվյալների բազաներ, լաբորատորիաներ, սարքավորումներ, լսարաններ և արհեստանոցներ,
- և մարդկային ռեսուրսներ՝ դասախոսներ, անհատական խորհրդատուներ, ուղղորդող մասնագետներ և արտաքին գործընկերներ, որտեղ հնարավոր է,
- և այլ աջակցություն՝ համատեղելի ՄԿԾ-ի և ՄԿԾ ուսումնական միավորի ուսումնառության ակնկալվող արդյունքներին:

(է) Ինչպե՞ս են ՄԿԾ մշակման/վերանայման գործընթացում ներկայացված ուսանողները, և ինչպե՞ս է ապահովվում հետադարձ կապը:

(ը) ՄԿԾ-ի/ուսումնական միավորի բովանդակությունն արդյոք ներառո՞ւմ է գրականության ցանկ, դասախոսությունների կոնսպեկտներ կամ տվյալ ՄԿԾ-ի/ուսումնական միավորի շրջանակում օգտագործվող ցանկացած այլ նյութեր:

(թ) ՄԿԾ-ի/ուսումնական միավորի շրջանակում արդյոք ստեղծվա՞ծ են անհրաժեշտ հարմարություններ հատուկ կարիքներ/հաշմանդամություն ունեցող անձանց համար:

2.5 ՄԿԾ-ն/ուսումնական միավորն արդյոք ունի՞ արժանահավատ ուսուցման

հնարավորություններ՝ երաշխավորելու ուսումնական ծրագրով սահմանված ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը:

2.6 ՄԿԾ-ի/ուսումնական միավորի կողմից Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի կամ կրեդիտային այլ համակարգերի և դրույթների օգտագործումը նախնական ուսուցման ճանաչման համար արդյոք համապատասխանո՞ւմ է այդ ոլորտը կարգավորող ազգային որևէ քաղաքականության:

2.7 ՄԿԾ-ն/ուսումնական միավորը արդյոք բավարարո՞ւմ է ժամանակակից կրթությանը և վերապատրաստմանը առաջադրվող պահանջները:

(ա) Բուհն արդյոք փաստեր ունի՞, որ տվյալ ՄԿԾ-ն/ուսումնական միավորը բավարարում է թիրախային ուսանողի կրթական և վերապատրաստման կարիքները:

(բ) ՄԿԾ-ն՝ որպես գործընթաց, և ՄԿԾ-ով սահմանված ուսումնառության ակնկալվող արդյունքներն արդյոք արտացոլո՞ւմ են համապատասխան շահակիցների (օրինակ՝ ուսանողներ, շրջանավարտներ, դասախոսներ, գործատուներ, համապատասխան խորհրդատու մարմիններ, հասարակության և համայնքի ներկայացուցիչներ) տեսակետները:

2.8 Արդյո՞ք ուսուցման ձևը (հեռակա, էլեկտրոնային, լրիվ/ոչ լրիվ ուսումնական օրով, խառը և այլն), հստակ ձևակերպված է, համապատասխանում է կանխորոշված մասնակիցների պահանջներին և ապահովում է ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը:

2.9 Մշակվե՞լ է արդյոք գնահատման ռազմավարություն ինչպես ընդհանուր ՄԿԾ-ի, այնպես էլ յուրաքանչյուր առանձին ուսումնական միավորի համար:

2.10 Արդյո՞ք ընդհանուր ՄԿԾ-ի և ՄԿԾ յուրաքանչյուր առանձին ուսումնական միավորի գնահատման (և՛ ձևավորող, և՛ ամփոփիչ) ռազմավարությունները հստակ են և պատշաճ: Դրանցով արդյոք հաստատվո՞ւմ է ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը:

2.11 ՄԿԾ-ի/ուսումնական միավորի ուսումնառության բոլոր արդյունքներն արդյոք գնահատելի՞ են:

2.12 Արդյո՞ք գնահատման բոլոր գործընթացները ազնիվ են, հիմնավորված, վստահելի և թափանցիկ: Գնահատման գործընթացն արդյոք ապահովո՞ւմ է ուսումնառության ակնկալվող արդյունքների գնահատումը:

2.13 Գնահատման մեթոդաբանության մշակմանը, բարելավմանն ու զանազանության ապահովմանը վերաբերող որոշումներն արդյո՞ք ընդունվել են ՄԿԾ համատեքստի շրջանակներում և շեշտադրում են ուսումնառության արդյունքները:

2.14 Մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակում արդյոք առկա՞ է այնպիսի թեզ, որով ուսանողը ցուցադրում է իր վերլուծական կարողությունը կամ ակադեմիական մակարդակում ինքնուրույնաբար խնդիրներ լուծելու կարողությունը, ինչպես սահմանված է ՈԱԾ-ի համապատասխան նկարագրիչներում:

2.15 Ուսանողների գնահատման՝ ՄԿԾ-ով սահմանված ընթացակարգերն արդյոք համապատասխանո՞ւմ են գնահատման ինստիտուցիոնալ կամ ազգային որևէ կանոնակարգի՝ լիարժեք համապատասխանեցման համար:

2.16 Մոդուլի/ուսումնական միավորի նպատակներն ու խնդիրներն արդյոք համահո՞ւնչ են

ՄԿԾ նպատակներին և խնդիրներին:

2.17 Ինչպե՞ս է հիմնավորվում ուսումնական միավորի ներառումը ՄԿԾ-ի մեջ:

2.18 Բուհն արդյոք կարո՞ղ է ցուցադրել, որ իր կողմից իրականացվող ուսումնական միավորը մրցունակ է այլ բուհերի համապատասխան ուսումնական միավորների հետ (արտաքին բենչմարքինգ):

2.19. 1ՄԿԾ ուսումնական միավորն արդյոք իրագործելի՞ է:

2.20Ուսումնական միավորն իրականացնող դասախոսական կազմն արդյոք ծանո՞թ է ՄԿԾ-ով սահմանված ուսումնառության ակնկալվող արդյունքներին:

2.20Արդյոք սահմանվա՞ծ են ուսումնառության ելքային արդյունքներ:

2.22Ուսումնական միավորի ուսումնառության ակնկալվող արդյունքներն արդյոք համահո՞ւնչ են ՄԿԾ-ով սահմանված ուսումնառության ակնկալվող արդյունքներին:

2.23 Սահմանվա՞ծ է արդյոք ընդունելության շեմ/չափորոշիչ: Հստակեցվա՞ծ են արդյոք ուսումնական միավորին մասնակցելու համար անհրաժեշտ բազային կրթության պահանջ և ՄԿԾ հնարավոր ուսանողներին առնչվող համապատասխան այլ պահանջներ:

2.24Ուսումնական միավորի ուսումնառության արդյունքների սահմանման մեջ արդյոք նկարագրվա՞ծ է, թե ուսանողը ինչ պետք է իմանա և կարողանա անել ուսումնական միավորի ավարտին: Արդյո՞ք օգտագործված լեզուն և բայերը ճշգրիտ են ու հստակ:

2.25ՄԿԾ ուսումնառության արդյունքների սահմանման մեջ արդյոք նկարագրվա՞ծ է, թե ուսանողը ինչ պետք է իմանա և կարողանա անել ծրագրի ավարտին: Արդյո՞ք օգտագործված լեզուն և բայերը ճշգրիտ են ու հստակ:

2.26Պատշաճ ուշադրություն դարձվե՞լ է արդյոք մոդուլի բովանդակությանը:

2.27Ուսումնական միավորի մակարդակում ուսումնառության արդյունքներն արդյոք նպաստո՞ւմ են ընդհանուր ծրագրի ուսումնառության արդյունքների ձեռքբերմանը:

2.28Ուսումնական միավորն արդյոք այնպե՞ս է մշակված, որ նրանում հստակ երևում է ուսումնառության արդյունքների կապը ՄԿԾ ուսումնառության արդյունքների հետ:

2.29Ինչպիսի՞ փաստեր կան, որոնք կվկայեն, որ թիրախային/հնարավոր ուսանողները կարող են ձեռք բերել ուսումնական միավորի ուսումնառության ակնկալվող արդյունքները:

2.30Արդյո՞ք ուսումնական միավորն այնպես է իրականացվում, որ ապահովվում է նրա ուսումնառության ակնկալվող արդյունքների հուսալի և արդյունավետ ձեռքբերումը ուսանողների կողմից:

2.31Արդյո՞ք խելամիտ ակնկալիք է այն, որ տվյալ մոդուլի/ուսումնական միավորի ընդունելության շեմը հաղթահարած բոլոր սովորողներն ի վիճակի կլինեն ավարտելու այն՝ գործադրելով համապատասխան ջանքեր և բավարարելով մոդուլի/միավորի պայմանները:

2.32Մոդուլը / ուսումնական միավորը արդյոք մրցունա՞կ է բենչմարքինգի շրջանակում (որտեղ հնարավոր է):

2.33Ուսանողների համար արդյոք մշակվե՞լ են հստակ տեղեկություններ մոդուլի/ ուսումնական միավորի ուսումնառության ակնկալվող արդյունքների, բովանդակության, դասավանդման և ուսումնառության մեթոդաբանության, գնահատման, կրեդիտների և ուսումնական նյութերի վերաբերյալ և ներկայացվել ուսումնական ծրագրի ձեռնարկում:

2.34Արդյո՞ք ուսանողների ծանրաբեռնվածությունը մանրակրկիտ կերպով է հաշվարկվել,

և սահմանվել են իրատեսական կրեդիտներ (օրինակ՝ օգտագործելով Գոնսալեսի և Վագենարի՝ Թյունինգի փաստաթղթերը):

2.35 Արդյոք հաստատվե՞լ է, որ չկան գնահատման այնպիսի գործընթացներ, որոնք չեն առնչվում ուսումնառության որևէ արդյունքի:

2.36 Արդյոք որոշվե՞լ է, որ ուսումնական այն միավորների շրջանակում, որոնք չեն համապատասխանում ՄԿԾ ուսումնառության արդյունքներին, հաճախման կամ ուսումնական միավորն ավարտելու համար գնահատական չի տրվելու:

2.37 Արդյոք հաստատվե՞լ է, որ մոդուլի/միավորի ուսումնառության արդյունքները ուղղակիորեն կապված են ՄԿԾ ուսումնառության արդյունքներին:

2.38 Արդյոք հաստատվե՞լ է, որ մոդուլի/միավորի ուսումնառության բոլոր արդյունքները գնահատվում են, և հստակեցվե՞լ է արդյոք, թե ինչպես են գնահատվում:

2.39 Գնահատման մեթոդաբանության շրջանակն արդյոք հասանելի՞ է բոլորին և համապատասխանո՞ւմ է տվյալ մոդուլին/միավորին:

2.40 «Գնահատում ուսումնառության համար» մոտեցումն արդյոք շեշտադրվա՞ծ է «ուսումնառության գնահատում» մոտեցման համեմատ:

2.41 Գնահատումը կարո՞ղ է արդյոք բավարար չափով և ուսանողների համար ընկալելի ձևով հաստատել, որ ուսանողները ձեռք են բերել ուսումնական ծրագրի բոլոր բաղադրիչների վերջնարդյունքները: Տվյալ մոդուլի/միավորի շրջանակում ուսանողների գնահատման ընթացակարգերը համապատասխանո՞ւմ են արդյոք ՄԿԾ-ի և հաստատության՝ ուսանողի գնահատման կանոնակարգերին:

2.42 Արդյոք վստահություն կա՞, որ գնահատման առաջադրանքները ուսումնառության բարձր շեմ են սահմանում:

2.43 Պլանավորվե՞լ են արդյոք գնահատում և հետադարձ կապ ամբողջ մոդուլի/միավորի դասավանդման ընթացքում՝ ամփոփիչ գնահատմանը ուսանողներին պատշաճ կերպով նախապատրաստելու համար:

2.44 «Գնահատում ուսումնառության համար» մոտեցումն արդյոք գերակշռո՞ւմ է «ուսումնառության գնահատում» մոտեցման համեմատ:

2.45 Ուսանողներին խրախուսո՞ւմ են արդյոք ներգրավվելու առարկայական (գործնական) մասնագիտական հանրույթներում:

2.46 Արդյոք կարևորվո՞ւմ է ուսանողների՝ գնահատման վերաբերյալ իմացության ձևավորումը ուսուցման այնպիսի գործընթացի կազմակերպման միջով, որում նրանք կարող են յուրացնել և կիրառել գնահատման չափորոշիչներն ու արձագանքել դրանց:

2.47 Առկա՞ են արդյոք ուսանողական կարծիքի ներկայացման ու հետադարձ կապի բավարար հնարավորություններ: Այնդեպքերում, երբ մոդուլը/ուսումնական միավորը դասավանդվում է մեկից ավելի վայրերում, ներառյալ այլ իրավազորությունների շրջանակը, ինչպե՞ս է դա իրականացվում:

2.48 Բավարարվա՞ծ են արդյոք դասավանդման տարբեր եղանակների (օրինակ՝ հեռակա, ոչ լրիվ ուսումնական օրով, առցանց ուսուցում) յուրահատուկ պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համապատասխանեցումը կարևոր տեղ է զբաղեցնում ՄԿԾ մշակման և բարելավման գործընթացում և «լայն իմաստով կարող է սահմանվել որպես ցանկալի նպատակներին հասնելու համար կրթական համակարգի բաղադրիչների (օրինակ՝ չափորոշիչների, ուսումնական ծրագրի, գնահատման մեթոդների և դասավանդման) փոխկապակցվածության աստիճան» (Փիրսոնի գնահատման զեկույց, էջ 2): Համապատասխանեցման գործընթացները բուհերին հնարավորություն են ընձեռում համագործակցաբար սահմանել, թե երբ, որտեղ և որքանով է անհրաժեշտ անդրադառնալ ՄԿԾ-ին առնչվող որակավորումներին, չափորոշիչներին և բովանդակությանը: Համապատասխանեցման փուլերը, ինչպես նշված է սույն ուղեցույցում, սովորաբար հաջորդական են, բայց կարող են դիտարկվել նաև միաժամանակ:

Հետազոտողները կարևորում են համապատասխանեցման և ուսանողների առաջադիմության բարելավման կապը: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ դասավանդման և ուսումնառության գործընթացների հիմնական թիրախը անհատ ուսանողն է ու իր կարիքները, և դրան նպաստում է հաջող համապատասխանեցումը: ՄԿԾ-ն համապատասխանեցնողները, միմյանց հետ համագործակցելով, գտնում են բովանդակությանը որոշակի տրամաբանական հաջորդականություն հաղորդելու և ուսանողների ձեռքբերումներին և առաջընթացին նպաստելու տարբերակներ, որպեսզի բոլոր ուսանողները հաջողության հասնելու հնարավորություն ունենան:

Այսպիսով, համապատասխանեցման գործընթացն ուղղված է ՄԿԾ հիմնական կողմնորոշիչ միավորներին ու բաղադրիչներին՝ շեշտադրելով ընդհանուր կրթական միջավայրը և ազգային մակարդակում կրթության պահանջների միավորումը, ինչպես նաև համապատասխան որակավորումներ ապահովող ՄԿԾ-ների շրջանավարտների համար աշխատատատեղեր ստեղծող մասնագիտական ոլորտի ակնկալիքները: ՄԿԾ-ների համապատասխանեցումը գլխավորապես դիտարկվում է իբրև որակի ներքին և արտաքին ապահովման հիմնական գործընթաց, որը բարելավվում է ներքին և արտաքին տարբեր շահակիցների հաղորդակցման շնորհիվ: Հաղորդակցումն օգնում է վերլուծելու բացթողումները, վեր հանելու տարբեր գործընթացների առնչվող խնդիրները և նպատակ է հետապնդում ծագած խնդիրների վերաբերյալ համատեղ որոշումներ կայացնելու: Այս ուղեցույցում ուրվագծվել են մի շարք քայլեր՝ ՄԿԾ համապատասխանեցման գործընթացում տարբեր խնդիրներ լուծելիս գործընկերներին աջակցելու համար:

Մինչ համապատասխանեցման գործընթացին անցնելը շատ կարևոր է նշել, որ բուհերը կրթության նկատմամբ պետք է արդյունքահեն մոտեցում որդեգրեն: Արդյունքահեն մոտեցումը արմատական փոփոխության է ենթարկում կրթական ծրագրի մշակման և վերանայման գործընթացները՝ անցում կատարելով ուսումնական ծրագրի մշակման՝ ներդրումների վրա հիմնված մոտեցումից (ենթադրում է դասընթացի բովանդակության նկարագրություն) դեպի այնպիսի մոտեցում, որի դեպքում դասընթացի բովանդակության դասավանդման և ուսումնառության, ինչպես նաև գնահատման գործընթացները մշակվում են՝ ելնելով ուսումնառության արդյունքներից: Այս մոտեցման դեպքում ուսանողները տեղեկացված են լինում, թե ինչ պետք է իմանան, հասկանան և կարողական անել ուսումնական միավորն ավարտելուց

հետո, այսինքն՝ ուսանողներն են ձևավորում իրենց ուսումնառության համատեքստը: Սա միաժամանակ ուղղորդում է դասախոսներին՝ մշակելու իրենց դասընթացը՝ ելնելով ՄԿԾ-ով սահմանված ուսումնառության արդյունքներից:

Այս ուղեցույցում առաջարկվում է «վայրընթաց մշակում, վերընթաց իրականացում» մոտեցումը: «Վայրընթաց մշակումը» մի մոտեցում է, որն իրականացվում է հետևյալ հետագծով՝ որակավորման վերլուծությունից դեպի ՄԿԾ և ուսումնառության ելքային արդյունքներ, և վերջապես, դեպի ուսումնառության արդյունքի, դրա գնահատման չափանիշների և համապատասխան այլ տեղեկությունների խորքային ուսումնասիրություն: Քանի որ ՄԿԾ-ն սովորաբար ներառում է ուսումնառության մի քանի (մինչև 15) արդյունքներ, անհրաժեշտ է ամբողջությամբ վերլուծել դրանցից յուրաքանչյուրը, ապա համադրել կատարված վերլուծությունները՝ բացահայտելու համար կրկնություններն ու այն կետերը, որոնցում ուսումնառությունն ու գնահատումը կարելի է միավորել:

Կարևոր է նշել, որ ուսանողը յուրացնում է ուսումնական ծրագրի բովանդակությունը, որը հիմնված է ՄԿԾ ուսումնառության ընդհանրական արդյունքների վրա, և ձեռք է բերում ուսումնառության ելքային արդյունքներ, որոնք հիմնված են որակավորման նպատակի վրա: Ահա թե ինչու է կարևոր վայրընթաց մշակումը, որն սկսվելով որակավորման կամ ՄԿԾ նպատակի սահմանումից՝ մշտապես ուշադրության կենտրոնում կպահի այդ նպատակը ուսումնառության արդյունքների ձեռքբերման համար անհրաժեշտ ուսումնառությունն ու գնահատումը պլանավորելիս:

«Վայրընթաց մշակում» մոտեցումը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

1. Ո՞րն է որակավորման նպատակը:
2. Ինչպե՞ս կարելի է իրականացնել այս նպատակը: Ի՞նչ պետք է իմանան և կարողանան անել ուսանողները այս նպատակին հասնելու համար: Ի՞նչ արժեքներ է բովանդակում այս նպատակը:
3. Ինչպե՞ս կարող եք իմանալ՝ արդյոք ուսանողները ձեռք են բերել ուսումնառության արդյունքները: Ինչպիսի՞ փաստեր պետք է փնտրեք: Այլ կերպ ասած՝ ինչպե՞ս եք գնահատելու՝ արդյոք ուսանողները ձե՞ռք են բերել ուսումնառության արդյունքները, թե՞ ոչ:
4. Ինչպե՞ս եք ուսանողներին նախապատրաստելու գնահատմանը: Դասավանդման և ուսումնառության ինչպիսի՞ գործընթացներով կարելի է ապահովել այն գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, որոնք պահանջվում են գնահատման համար:

«Վայրընթաց մշակում» մոտեցումն իրականացնելուց հետո գործի է դրվում մեկ այլ մոտեցում՝ «վերընթաց իրականացումը»: Սա նշանակում է իրականացնել ուսումնառության այնպիսի գործընթացներ, որոնք ուսանողներին կնախապատրաստեն գնահատմանը: Այս գործընթացը կապահովի փաստեր այն մասին, որ ուսանողները բավարարում են ուսումնառության արդյունքների պահանջները, հետևաբար որակավորման նպատակը իրականացված է:

Հենց այս ընդհանուր մոտեցման շրջանակում էլ սույն ուղեցույցում փորձ է արվել մշակելու համապատասխան գործիքակազմ նրանց համար, ովքեր կանգնած են համապատասխանեցման անհրաժեշտության և մարտահրավերի առջև:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՐՏԱՅՈԼՈՂ ԲԱՅԵՐ

Ստորև բերված բայերի ցանկի օգտագործումն օգնում է հստակեցնելու և սահմանելու հմտությունները՝ ըստ դրանց ծավալի և բարդության:

Գիտելիք (ծավալը և տեսակը)

Նկարագրել, սահմանել, ցուցակագրել, մեջբերել, մտաբերել, պատմել, ճանաչել, գրել, վերարտադրել, ընտրել, սահմանել:

Հմտություններ (ծավալը և տեսակը)

Կիրառել, գնահատել, զուգորդել, ընտրել, հստակեցնել, դասակարգել, հաշվել, հակադրել, ավարտել, կառուցել, փոխակերպել, վերծանել, պաշտպանել, ցուցադրել, նկարագրել, մշակել, տարբերակել, բացահայտել, զատորոշել, քննարկել, զանազանել, բեմականացնել, վարձել, գնահատական տալ, քննել, բացատրել, փորձարկել, արտահայտել, ծավալել, հաշվարկել, ընդհանրացնել, օրինակներ բերել, սահմանել, լուսաբանել, ցույց տալ, մեկնաբանել, փոխակերպել, գործել, կազմակերպել, գործառել, արտադրել, ճանաչել, զեկուցել, վերանայել, ընտրել, մասնավորեցնել, խթանել, լուծել, ամփոփել, թարգմանել, օգտագործել:

ՈԱԾ-ում առկա է բայերի երեք խումբ, որոնք արտացոլում են **կարողությունների համապատասխան ենթախմբերը:**

Ինքնավարություն և պատասխանատվություն (ներըմբռնում)՝ ընդունել, գնահատել, պարզել, բանավիճել, մարտահրավեր նետել, ընտրել, եզրակացնել, հակադրել, հավաստիացնել, քննադատել, պաշտպանել, զանազանել, քննարկել, բանավիճել, զատորոշել, բացատրել, արժևորել, նախաձեռնել, մեկնաբանել, դատել, արդարացնել, կանխատեսել, համոզել, հարցնել, խորհուրդ տալ, լուծել, ընտրել, ստանդարտացնել, ամփոփել, համադրել, իմաստավորել:

Ինքնազարգացում (սովորել՝ ինչպես սովորել)՝ գիտակցել, փորձել, մարտահրավեր նետել, համակցել, ավարտել, պաշտպանել, արտահայտել (որևէ բանի մասին կարծիք կամ գնահատական), զանազանել, քննարկել, բանավիճել, ընդունել, նախաձեռնել, ինտեգրել, դատել, արդարացնել, գործառել, հարցնել, հարաբերել, համադրել, արժևորել:

Դեր և համատեքստ՝ ճանաչել, գործել, հավատարիմ մնալ, հարցնել, ընդունել, պատասխանել, աջակցել, մարտահրավեր նետել, համակցել, ավարտել, համաձայնեցնել, համագործակցել, պաշտպանել, արտահայտել (որևէ բանի մասին կարծիք կամ գնահատական), տարբերել,

քննարկել, ցուցադրել, բանավիճել, ընդունել, նախաձեռնել, ինտեգրել, միացնել, դատել, արդարացնել, մասնակցել, գործառել, հարցնել, զեկուցել, լուծել, համադրել, արժևորել:

Բլումի տաքսոնոմիայից բխող գործողության բայեր

Գիտելիք	Ընկալում	Կիրառում	Վերլուծում	Գնահատում	Ստեղծում
սահմանել	բացատրել	լուծել	վերլուծել	վերաձևակերպել	մշակել
ճանաչել	նկարագրել	կիրառել	համեմատել	քննադատել	ստեղծագործել
նկարագրել	մեկնաբանել	պարզաբանել	դասակարգել	գնահատել	ստեղծել
պիտակավորել	վերաձևակերպել	մոդիֆիկացնել	հակադրել	պատվիրել	ծրագրել
ցուցակագրել	ամփոփել	օգտագործել	զանազանել	գնահատական տալ	համակցել
անվանել	դասակարգել	հաշվարկել	եզրակացնել	դատել	ձևակերպել
հաղորդել	համեմատել	փոփոխել	տարանջատել	աջակցել	հայտնաբերել
համապատասխանեցնել	զանազանել	ընտրել	բացատրել	համեմատել	վարկած առաջադրել
ճանաչել	քննարկել	ցուցադրել	ընտրել	որոշել	փոխարինել
ընտրել	տարբերել	բացահայտել	դասակարգել	զատորոշել	գրել
ստուգել	ընդարձակել	փորձարկել	միացնել/կապել	խորհուրդ տալ	կազմել
տեղավորել	կանխատեսել	կապել/կապակցել	տարբերել	ամփոփել	կառուցել
մտապահել	զուգորդել	ցույց տալ	զատորոշել	գնահատական տալ	զարգացնել
մեջբերել	հակադրել	ուրվագծել	բաժանել	ընտրել	ընդհանրացնել
մտաբերել	փոխակերպել	ավարտել	դասավորել	համոզել	ինտեգրել
վերարտադրել	ցուցադրել	կառուցել	մատնացույց անել	պաշտպանել	փոխակերպել
աղյուսակավորել	գնահատել	բեմականացնել	առաջնահերթություններ տալ	գնահատել	կազմակերպել
պատմել	արտահայտել	մեկնաբանել	ստորաբաժանել	սխալներ գտնել	պատրաստել
պատճենել	ճանաչել	գործածել/օգտագործել	հետազոտել	աստիճանավորել	դուրս բերել
բացահայտել	նշել	նկարել	գովազդել	չափել	վերադասավորել
ընդօրինակել	եզրակացնել	պատրաստել	արժեք տալ	կանխատեսել	վերաշարադրել
թվարկել	կապակցել	արտադրել	մասերի բաժանել	աստիճանակարգել	դերային խաղ կատարել
ունկնդրել	վերաշարադրել	զեկուցել	հաշվարկել	միավորներ շնորհել	հարմարեցնել (ադապտացնել)
դիտարկել	ընտրել	սովորեցնել	եզրակացնել	ընտրել	կանխատեսել
դուրս թողնել/բացթողնել	թարգմանել	գործել	ամրակցել	թեստավորել	կազմակերպել
կարդալ	հարցնել	կառավարել	քննադատել	վիճել	հավաքել
արտասանել	մեջբերել	ձևակերպել/շարադրել	եզրակացնել	եզրակացնել	ընտրել
գրառել	բացահայտել	դիագրամ կառուցել	կապեր ստեղծել	հաշվի առնել	համագործակցել
կրկնել	ընդհանրացնել	հավաքել	դիագրամ կազմել	քննադատել	
վերապատմել	օրինակներ բերել	հաշվել	տրոհել	բանավիճել	հնարել
պատկերացնել	խմբավորել	որոշել	գնահատել	դասակարգել	արտահայտել
	յուսաբանել	մշակել	փորձարկել	խմբագրել	հեշտացնել
	դատել	կիրառել	կենտրոնացնել	արդարացնել	պատկերացնել
	զննել	հաստատել/ապացուցել		համոզել	եզրակացնել
	դասավորել	քննել	ցուցադրել	դրույքաչափ սահմանել	միջամտել
	զեկուցել	բացատրել	կազմակերպել	կշռել	արդարացնել
	ներկայացնել	հարցազրույց անցկացնել	ուրվագծել		անել
	հետազոտել	դատել	պլանավորել		կառավարել
	վերանայել	ցուցակագրել	հարցնել		բանակցել
	արտագրել	գործել	թեստավորել		սկզբնավորել
	ցույց տալ	գործառել			առաջարկել

	հետևել փոխակերպել	կանխատեսել արձանագրել ժամանակացույց կազմել նմանակել փոխանցել գրել			վերակազմակերպել զեկուցել վերանայել նմանակել լուծել մտածել համակարգել աջակցել թեստավորել հաստատել

Համալսարանական դասավանդման, ուսումնառության և գնահատման կենտրոն
http://uwf.edu/cutla/SLO/ActionWords

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄԿԾ-Ի ԵՎ ՈԱԾ-Ի ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՈԱԾ-Ի ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	ՈԱԾ-Ի ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ												ԸՆԴՀԱՆՈՒՐ
	Գիտելիք		Հմտություն					Կարողություն					
	1.1	1.2	2.1	2.2	2.3	2.4	2.5	3.1	3.2	3.3	3.4	3.5	
Ուսումնառության արդյունք 1	1	1											2
Ուսումնառության արդյունք 2		2											2
Ուսումնառության արդյունք 3			2		1			1		2			6
Ուսումնառության արդյունք 4		2		1		2		1			1		7
Ուսումնառության արդյունք 5							2					1	3
Ուսումնառության արդյունք 6	1	1					1		2				5
Ուսումնառության արդյունք 7			2		1		2			1		2	8
Ուսումնառության արդյունք 8											2		2
Ուսումնառության արդյունք 9				1		1			1	1		1	5
ԸՆԴՀԱՆՈՒՐ	2	6	4	2	2	3	5	2	3	4	3	4	40

ՈԱԾ-ը նկարագրում է ՀՀ-ի յուրաքանչյուր կրթական մակարդակում գիտելիքների, հմտությունների և կարողությունների ընդհանրական մակարդակը: Առաջին հայացքից, գիտելիքների, հմտությունների և կարողությունների համապատասխան մակարդակները նկարագրված են հստակ տեքստերի միջոցով, ինչը տարբերվում է կրթական մակարդակի՝ ուսումնառության արդյունքների հիման վրա նկարարգրման սկզբունքից: Այնուամենայնիվ, տեքստի առավել խորքային ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում դուրս բերելու հիմնական բառեր կամ բառակապակցություններ, որոնք թույլ են տալիս առանձնացնել ընդհանրական ուսումնառության արդյունքները՝ նկարագրելով տվյալ որակավորման գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, օրինակ՝ վերլուծելու և եզրակացություններ անելու կարողությունը, թիմային աշխատանքի հմտությունները, քննադատական մտածողությունը և այլն: ՈԱԾ-ի ուսումնառության արդյունքները տեղադրելով աղյուսակի վերևում, իսկ ՄԿԾ

ուսումնառության արդյունքները՝ ձախ կողմում, մենք կստանանք ՈԱԾ-ՄԿԾ ուսումնառության արդյունքների մատրից: Մատնանշելով ՄԿԾ ուսումնառության յուրաքանչյուր արդյունքի համապատասխանությունը ՈԱԾ-ի ուսումնառության որևէ արդյունքի՝ կարելի է տեսնել, թե որքանով են ՄԿԾ ուսումնառության արդյունքներում ընդգրկված ՈԱԾ-ի նկարագրիչները, և հետևաբար, որքանով է կրթությունը համապատասխանում շնորհված որակավորմանը: 1-ը ցույց է տալիս, որ ծրագրի ուսումնառության արդյունքները «զգալի ներդրում են ունեն» ՈԱԾ-ով սահմանված ուսումնառության արդյունքների ձևավորման մեջ, իսկ 2-ը ցույց է տալիս «համապատասխանություն» (սերտ հարաբերակցություն):